

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

354(47925)
Z-20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀԻՔԵՑԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏ ՀՅԱՀՎԵՑՈՒԹՅՈՒՆ

Պողետացներ բոլոր յեկեցերի, միացե՛ք.

354(47.925)

Հ-20

ՍԱԳՈ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

— ՀԱՅԱՍՏԱՆԻ —
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ
3-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ 2-ՐԴ ՆԱՏԱՐՁԱՆՈՒՄ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ, 1926

1 MAR 2010
231

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՄԴԱՅԻՆ ՍՈՅԻՍԼԻԱԾ. ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք.

ՍԱ.ՔՌ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

354(47:925)

2- 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

13817

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ 3-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ
2-ՐԴ ՆԱՏԱՋՐՁԱՆՈՒՄ.



ՊԵՏՈՎԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

86ՄԵԴ.ԱՆ—1926

Ընկերներ, ընդամենը յերկու ամիս առաջ Հայաստանի քանվորներն ու գյուղացիներն իրենց սոցիալիստական հայրենիքի խորհրդայնացման տարեղարձի առթիվ իրենց աշխատանքի յեղակացությունն եյին հանում և գծում այն հիմնական ուղիները, վորոնցով պետք ե առաջնորդվեն այսուհետեւ։ Այսոր առաջին անգամ Հայաստանի կառավարությունը հաշիվ ե ներկայացնում Անդրկովկասի աշխատավորությանը։ Այսոր Անդրկովկասի աշխատավորությունն իրավունք ունի նրա առաջ դնելու մեր աշխատանքի եյությունն ընդգրկող մի շարք կարդինալ, կարևոր հարցեր, և Հայաստանի կառավարությունը պարտավոր ե նրանց տալ ամենաճշգրիտ և ուղիղ պատասխան։ Այդ հարցերը դառնում են գլխավորապես հետեւյալ կետերի շուրջը։

Նախ, ստեղծվում ե արդյոք Հայաստանում պրոլետարական պետության նոր, իսկական խորհրդային տիպը, վորն իրեն նպատակ ե դրել սոցիալիզմ կառուցել։ Յերկրորդ, արդյոք և ինչ ուղղությամբ ե աճում Հայաստանի տնտեսությունը. և յերրորդ, ինչ ե արել և ինչ ե անում Հայաստանի կառավարությունն այն կուլտուրական հեղափոխության համար, վորը միաժամանակ ամեն մի սոցիալիստական զարգացման նախապայմանն ե հանդիսանում, դրա հետ միասին նաև այդ շինարարության ամենակարող զենքը։

Անա այն յերեք ամենահիմնական հարցերը, վորոնց այսոր Հայաստանի կառավարությունը ձեր առաջ պետք ե պատասխան տա։

Հայաստանի կառավարությունն ամենից առաջ ուշագրություն ե դարձնում սոցիալիստական, տնտեսական և ազգային բնույթի այն առանձնահատկությունների վրա, փորոցնա ստիլ-ված ե իր աշխատանքի ժամանակ հաշվի առնել: Մենք այստեղ իրոք կառուցում ենք նոր տիպի պետություն, միայն սոցիալական կարգերի վորոշ առանձնահատկություններով և ազգային մոմենտների հատուկ նկատառումով: Մի կարծեք, վոր այդ առանձնահատկությունները հաշվի չեն առնվում: Առանց հաշվի առնելու սոցիալական տարբեր դասակարգերի փոխարարերությունները, հասկանալի յե, վոր դժվար ե և անհնարին առաջ տանել ճմարիտ պետական շինարարություն:

Հայաստանը գերազանցորեն, կարելի յե ասել, նույնիսկ բացառապես գյուղացիական մի յերկիր ե: Այս յերկում պրոլետարիատը կազմում ե բնակչության մի փոքրիկ շերտը միայն. այդ հայտնի յե ամենքին և պարզ ե թուուցիկ հայացքից իսկ: Թե վոր աստիճանի բարակ շերտ ե կազմում այստեղ պրոլետարիատը, այդ ապացուցում են մեր արհեստակցական միությունների թվերը, ինչպես և մեր ձեռնարկությունների ու հիմնարկությունների մեջ աշխատող բանվորական ուժերի քանակը՝ ըստ աշխատանքի կատեգորիաների և արհմիութենական խմբակների: Թվերի վերլուծումը մեզ բերում ե այն յեղբակացության, վոր մեր վարձու ուժերի, պրոլետարիատի աչքի ընկնող մասը կազմում են խորհրդային ծառայողների խմբակները,—մեր ձեռնարկություններում և հիմնարկություններում աշխատող 24 հազարից ավելի քան 12 հազար: Արդյունաբերական բանվորների խական տոկոսը հասնում ե մո 50%-ի և դեռ 50% ից ել միքիչ պակաս: Մեր ձեռնարկություններում աշխատում են ընդամենը 11 հազար արդյունաբերական բանվոր: Մի աչքի ընկնող շերտ ել կազմում են մեր գյուղական բատրակները, մոտ 7-9 հազար: Դուք պարզ տեսնում եք, վոր պրոլետարական տարրը կազմում ե բնակչության մի շատ աննշան, բարակ շերտը: Այստեղ պետք ե հենց միանդամից ճիշտ հեռանկարներ ունենալ և ուզիղ դնել այն հիմնական խմբերի փոխհարերության խնդիրը, վորոնք յուրաքանչյուր խորհրդային

պետության բազան են կազմում: Մեզ մոտ ել սոցիալիստական իրավակարգը հիմնված ե յերկու դասակարգերի՝ պրոլետարիատի և գյուղացիության աշխատակցության վրա: Մեզ մոտ, վորոշ չափ, աշխատակցության ե կանչվում նաև նեպմանը. բայց այստեղ նեպմանի դերը վոչ մի դեպքում չպետք ե չափազանցել. դուք Հայաստանի կառավարության տնտեսական գործունեյության տեսությունից կտեսնեք, թե վոր աստիճան փոքր և աննշան դեր ե կատարում նա մեզ մոտ, Հայաստանում, գոնեառայժմ:

Մինչդեռ կա մի շերտ, վոր ունի իր պատմությունը, ութե քաղաքականապես, թե հասարակականապես ակտիվ ե, և վորին ստիպված պիտի լինենք հաշվի առնել սոցիալիստական շինարարության ժամանակ: Ինտելիգենցիան ե այդ մի շերտը, վոր կարելի յե բաժանել յերեք յենթաշերտերի: Ամենից առաջ վերցնենք բարձրորակ յենթաշերտը:

Իմ հաշվետու զեկուցման մեջ յես անհրաժեշտ եմ գտնում նշել, վոր նա, այդ վորակյալ ինտելիգենցիան, մեր կենտրոնական, կուլտուրական և տնտեսական որգաններում գործում ե և աշխատակցում Հայաստանի պրոլետարիատին և գյուղացիությանը ընդհանրապես և ամբողջությամբ, վոչ թե վախից դրդված, այլ խղճմտանքով: Յես պետք ե նշեմ նույնպես, վոր այն սկզբնական սարոտաժը, վոր կարելի յեր նախատեսել Հայաստանի խորհրդայնացման առաջին որերին, ներկայումս գոյություն չունի, վոր յերկրի տնտեսական վերածնման և վերականգնման գործը, վորին նվիրված են բնակչության յերկու հիմնական դասակարգերի բոլոր ուժերը, հարազատ ե դառնում նաև այդ ինտելիգենցիայի համար:

Այս շերտից հետո գալիս ե գյուղացիական վորակյալ ինտելիգենցիայի հսկայական մասը: Մենք գյուղում ունենք արդեն խորհրդային գյուղատնտես, ունենք խորհրդային բժիշկ, ուսուցիչներ և գտում ե աշխատակցել խորհրդային իշխանությանը, աշխատում ե բարեխղճորեն, հրաժարվելով իր նախկին քաղաքական և հասարակական մոլորություններից:

Բայց ամենակարևորը նոր ծնվող յերիտասարդ ինտելիգեն-

ցիան ե, գյուղական նոր խնտելլիգենցիան, վորի գլխավոր կադրը մատակարառում ե կոմյերիտմիությունը, և վորը թե հասարակականապես և թե քաղաքականապես դաստիարակվում ե մեր ստորին խորհրդային, կոոպերատիվ ապարատներում և գյուղական խորհրդային-հասարակական որդաններում։ Այդ շերտն ավելի ակտիվ ե և բավարար չափով հայտնաբերում ե իրեն մեր գյուղում՝ ցուցաբերելով իր ամենակտիվ մասնակցությունը գյուղի մեր բոլոր հասարակական աշխատանքներին և նպաստելով նրա ծավալմանը։ Հենց այդ խամս ե կազմում գլուխավոր մասն այն անկուսակցական ակտիվի, վորը խմբվում ե մեր խորհուրդների շուրջը և վորը մեր բոլոր կամպանիաներին ամենաակտիվ մասնակցություն ե ցույց տալիս։

Ընկերներ, ներկայումս, գյուղական հիմնական մասսաները կազմակերպված են մեր խորհուրդներում, խորհրդային ստորին ապարատում։ Նախքան խորհրդային ապարատի կազմին անցնելը, թույլ տվեք մի յերկու խոսքով կանգ առնել մեր գյուղացիության քաղաքական արամադրությունների վրա։

Ներկայումս գյուղացիությունը լծվել ե սոցիալիստական աշխատանքի, իր տնտեսության բարձրացման գործին, ողտըվելով այն բարիքներից, վորը նրան բերեց չայտատանի խորհրդայնացումը։ Գյուղական հիմնական մասսան յերեսը դարձըել ե դեպի խորհրդային իշխանությունը և թիկունքը՝ դեպի նախկին քաղաքական կուսակցությունները, վորոնք մի ժամանակ հավակնություն ունեյին իրենց ամբողջ հայ ազգի ներկայացուցիչ համարելու։ Այժմ յուրաքանչյուր մարդ կհամոզվի սրանում, յեթե լինի մեր գյուղում։ Գյուղացիության դժոնությունը ցույց տվող հիմնական նշանները հենց այդ կարծիքի ոգտին են խոսում։ Վերցրեք բրեեական բանդիտիզմը։ Վերջին տարիներում մենք չենք ունեցել բանդիտիզմը՝ ծնված մեր յերկրում։ Մեզ մոտ բանդիտիզմն ոտարագգի, արտասահմանյան ծագում ունի։ Ժամանակ առ ժամանակ մենք ականատես ենք լինում կամ թրքական բանդիտների հարձակումներին, կամ քրդական։ Մեզ հաջողվում ե այս հարձակումներն իսկույն կամ քրդական։ Մեզ հաջողվում ե այս հարձակումներն իսկույն լիկվիդացիայի յենթարկել և բանդիտները նորից վերադառ-

նում են իրենց յերկիրը։ Մեր յերկրի ներսում այդ բանը նկատելի չե, մենք մեր յերկրում առաջացած բանդիտիզմ չունենք։

Յերկրորդ մոմենտը, վորը կարող եր ցույց տալ մեր գյուղացիության քաղաքական դժոնությունը, դա հակա-խորհրդային կուսակցությունների աճումը պիտի լիներ մեզ մոտ։ Այդ տեսակետից վորոշակի պետք ե ասել, վոր մեր հակախորհրդային կուսակցությունները չեն ել փորձում ընդհուպ մոտենալ գյուղացիությանը՝ նրան խորհրդային իշխանության հետ կովեցնելու նպատակով։ Յես կարծում եմ, վոր այդ բանը տեղի չի ունենում վոչ թե նրա համար, վոր նրանք այդ չեն ցանկանում, այլ վորովհետև նրանք չեն համարձակվում գյուղական մասսաներին, չքավոր և միջակ շերտերին մոտենալ վորոշակի հակա-խորհրդային պրոպագանդայով։ Մյուս կողմից, մինչև հիմա յել շարունակվում ե մացորդների բայցայումը, վորի ամենալավ ապացույցի ականատեսը յեղանք մենք յերկուտարի առաջ։ Այդ պրոցեսը մինչև այժմ ել գոյություն ունի գյուղացիության և խնտելլիգենցիայի մեջ, դա տվելի և տվելի խոր ե թափանցում հակա-խորհրդային կուսակցությունների շարքերը։

Յերրորդ մոմենտը, վորի ժամանակ գյուղացիությունն առիթ ուներ ցուցաբերելու իր բաղաքական դժոնությունը, գյուղատնտեսական հարկն ե։ Յեթե գյուղատնտեսական հարկի խնդիրն անցյալ տարի, կարծես թե, խորհրդային իշխանության և գյուղացիության մեջ դժոնություն առաջ բերեց, ապա մենք պետք ե ասենք, վոր այս տարի նա այնքան թեթև ե, վոր գյուղացիները չեն ել շտապում մտցնել այն, մտածելով, վոր միշտ ել կարող են մտցնել թե հարկը և թե նրա վրա յեկած տուգանքը։ Յեթե հետևենք գյուղատնտեսական հարկի ամբողջ պատմությանն այս հինգ տարվա ընթացքում, ապա կնկատենք հետևյալ հիմնական մոմենտները։ Ժամանակի ընթացքում, տարեցտարի, գյուղացիության վրա դրվող հարկը թեթևացվում ե, և նրա նշանակությունը մյուս հարկերի շարքում պակասում ե։ Յեթե 1922 թվին ուղղակի

հարկեր ստացվել են 159,000 ռ., անուղղակի հարկեր՝ 138.000ռ., գյուղմիամհարկ՝ 715,000 փութ ցորեն, յեթե 1922 թվին գյուղացիության վրա գրված հարկը յերկու անգամ ավելի յե մյուս տիպի բոլոր հարկերից, յեթե նույնը կրկնվում է 1923 թվին ել, ապա 1924 թվին գյուղատնտեսական հարկը պակաս ե ուղղակի և անուղղակի հարկերի գումարից՝ գերազանցելով նրանց յուրաքանչյուրին՝ առանձին վերցրած։ 1925—1926 թվի գյուղատնտեսական հարկը պակաս ե այդ յերկու տիպի հարկերից առանձին-առանձին վերցրած։ Յեթե վերցնենք ուրիշ թվեր, մեր գյուղական տնտեսության ընդհանուր արդյունքի գումարից հանած տոկոսային թիվը, ապա կտեսնենք, վոր պատերազմից առաջ, 1912 թվին այդ թիվը կազմում եր 4,73⁰/₀, 1923 թվին միայն 4⁰/₀, իսկ 1924-ին 35,⁰/₀, 1925-ին ընդամենը 2,18⁰/₀։ Ուրիշ խոսքով, գյուղատնտեսական հարկը, մինչ-պատերազմյանի համեմատությամբ, յերկու անգամ պակասել ե և դառնում է մեր պետական մուտքերի և հարկերի սիստեմի մեջ այնպիսի աննշան մի մեծություն, վոր, հավանորեն, հետեւյալ տարվանից, ամբողջ գյուղատնտեսական հարկը տեղերի տնօրինությանը կանցնի։

Ինչ վերաբերում է այն բանին, թե ինչպես են այս տարի գյուղացիները մտցնում գյուղատնտեսական հարկը, յես պետք ե ասեմ, վոր մտցրած ե բյուջեյով նախատեսված գումարի 68⁰/₀ը, իսկ անցյալ տարի մտցրած ե յեղել 86⁰/₀։ Յեկ հարկային քաղաքականություն գծով, գյուղացիության տրամադրությունը վոչ մի վատ բան նախագուշակել չի տալիս։ Խորհրդային իշխանության և գյուղացիության միջև տարածայնություն ցույց տվող վոչ մի նախանշան չկա։ Կա մի հանգամանք միայն, վորը կարող է խորհրդային իշխանությունն ու նրա քաղաքականությունը ընդհարման հասցնել գյուղացիության հետ։ Գների քաղաքականությունն ե այդ։ Բայց թույլ տվեք, ընկերներ, այդ ինդրին դառնալ այն ժամանակ, յերբ յես կղեկուցեմ մթերությունը (զագուցք) մասին, իսկ այժմ յես կսահմանափակվեմ ընդգծելով մի հանգամանք, այն, վոր այս տարի այդ հողի վրա խորհրդային իշխանությունն

ու գյուղը խոշոր տարածայնություններ չունեն։ Այսպիսով գյուղի քաղաքական տրամադրությունն ամբողջությամբ այս վերջին տարում, ինչպես և վերջին 4 տարիների ընթացքում անկասկած և կատարելապես յեղել ե խորհրդային իշխանության կողմը։

Պետության նոր տիպն ամենից առաջ և ամենից շուտ պահանջում ե, վորպեսզի խորհուրդները լինեն իրոք մասսայական որգաններ, վորպեսզի խորհուրդներում իրոք հանդես գա աշխատավոր բնակչության խոշոր մեծամասնության կամքն ու ցանկությունը։ Այս տեսակետից, իհարկե, մեզ համար հետաքրքիր ե և անհրաժեշտ դիտել, թե ինչ ե կատարվում մեր ստորին ապագարատի ներքերում, վորոնք անմիջականորեն շփումն են ունենում մեր գյուղի հետ, այսինքն, մեր գյուղխորհուրդներում և շրջգործկոմիներում։ իրոք մեր գյուղացիությունն ե հանդիսանում դրության տերը, իրոք գյուղական մասսաները կազմակերպված են, և իրոք գյուղական մասսաներն ակտիվ աշխատանք են տանում։

Այսուեղ անհրաժեշտ ե միքիչ ավելի մանրամասն կանգառնել թվերի վրա, և ինչքան ել վոր այդ ձանձրալի յե, թափանցել և մտքով խորասուզվել այն թվերի մեջ, վոր յես հիմա կհայտարարեմ։

Հայաստանում հազարից քիչ ավելի գյուղ կա, իսկ գյուղխորհուրդներ՝ ընդհամենը 791, շրջգործկոմիներ՝ 36, գավգործկոմիներ՝ 9։ Խորհուրդների անդամները ընդհանուր թիվը 13,776 ե, վորի բացարձակ մեծամասնությունը կազմում է արական սեռը, և միայն 6,6⁰/₀-ն ե բաղկացած կանանցից։

Այս մի բաց ե այն տեսակետից, վոր մեր խորհուրդները դեռ չեն կարողացել իրենց ստորին ապագարատներում ակտիվ աշխատանքի մեջ քաշել բավարար բանակությամբ կանայք։ Կազմի տեսակետից հատկապես ավելի զգուշ պետք ե վերաբերվել գեղի ազգային մոմենտը։ Ազգային մոմենտը հանդիսանում է մեզ մոտ այն առանձնահատկությունը, վորի մասին յես խոսեցի իմ գեղեկուցման սկզբում։ Մեր ստորին խորհրդային ապագարատի կազմի մեջ այդ ազգային մոմենտը հատկա-

պես ավելի ուժգնությամբ պետք ե ընդգծվի։ Բայց այդ աղ-
 դային մոմենտն ունի իր տարբերությունները։ Ամենից
 առաջ ու ամենից շուտ, մեր աշխատանքի ժամանակ մենք
 պետք ե վոչչացնելինք վելիկառուսական շովինիզմի բոլոր
 այն հետքերը, վոր նկատելի եյին մեր բոլոր հիմնարկությունն-
 երում։ Հարկավոր եր բոլոր մեր հիմնարկություններում
 խիստ միջոցների դիմել, վորպեսզի կարելի լիներ բոլոր ան-
 կուններից վերջնականապես վոնդել ոռւսացման քաղաքակա-
 նության բոլոր հետքերը, վորը ցարական կառավարությունն
 այնպես յեռանդով վարում եր մեզ մոտ՝ իբրև ամենահեռավոր
 ծայրագավառում։ Պետք ե ասել, վոր չնայած այն հանգաման-
 քին, վոր բոլոր այդ հիմնարկություններում ծառայողների
 հսկայական մեծամասնությունը հայեր եյին, բայց և այնպես,
 ազգայնացման քաղաքականությունն ստիլված եյինք անցկա-
 ցնել մեծ դժվարություններով և միշտ ել հանդիպում եյինք դի-
 մադրության։ Վորպեսզի գործավարությունը հայերնի փոխվի,
 անհրաժեշտ յեղան մի շարք տարիների համառ աշխատանք և
 ամենառաջադիր վերաբերմունք. վորպեսզի, մյուս կողմից, այդ
 հիմնարկություններում հարկ յեղած տեղը տրվի Հայաստանի
 ազգային վորքրամասնությունների լեզուներին, վորպեսզի կար-
 գավորվի ուղիղ կիրառումն այն հիմնական սկզբունքների, վո-
 րոնք հիշված են մեր հիմնարկությունների ազգայնացման դեկ-
 րետի մեջ, դրա համար մենք այժմ ել ստիլված ենք մեծ
 ջանք ու յեռանդ գործադրել։ Շատ մոտիկ անցյալում մեր
 կարերը հիմնարկություններից մեկի մեջ ստիլված յեղանք
 հատուկ հանձնաժողով նշանակել հետազոտության համար,
 քանի վոր այդ հիմնարկությունը բնակչության հիմնական
 մասսայի հետ ունեցած փոխհարաբերության ժամանակ գործ
 եր ածում ոռւսաց լեզուն։ Յես խոսում եմ մեր փոստային
 վարչության մասին, վորը մինչև ամենավերջին ժամանակներս
 իր ծանուցագրերն ուղարկում եր ոռւսաց լեզով։ Նույն բանը
 տեղի յեր ունենում նաև Պետապում, վորը, ճիշտ ե, վաղուց
 չե, ինչ առաջ ե յեկել, բայց և այնպես, վորոշ ձգտում ուներ
 խոսել ժողովրդի հիմնական մասսայի հետ ոռւսաց լեզով և

գրագրությունների մեջ պահպանել այդ լեզուն։ Հավանական
 ե, վորոշ տեղեր դեռ շարունակվում են այդ աննորմալ հարա-
 բերությունները և հավանաբար դեռ ամեն ինչ արված չե,
 մինչդեռ այդ հարկավոր ե անել ամենայեռանդուն և ամենա-
 համառ միջոցներով։

Մրա հետ միասին մենք պետք ե հաշվի առնենք նաև
 այն հանգամանքը, վոր ամբողջ ազգաբնակության $85-86^0/0$
 կազմող հայերի կողքին գտնվում են մի շարք ազգային փոք-
 րամասնություններ՝ β ուրքեր $-9,8^0/0$, ոռւսներ $-2^{1/4}^0/0$, ասորի-
 ներ, յեղիդիներ և հույներ։ Նրանց վերաբերմամբ խորհրդա-
 յին իշխանությունը չի կարող փոխել իր քաղաքականությունը
 և պետք ե ազատ շփում պահպանե նրանց հետ այն լեզով,
 վորով նրանք խոսում են, և վորը նրանց համար հասկանալի
 յե։ Մենք պետք ե խոստովանվենք, վոր թեև այդ ուղղու-
 թյամբ մենք աչքի ընկնող քայլեր արել ենք, բայց դա դեռ
 շատ հեռու յե բավարար լինելուց։ Մեր խորհրդային իշխանու-
 թյան հիմնական որգանների ազգային կազմի վերաբերյալ β վե-
 րըն ասում են, վոր խորհրդային ստորին ապահարատում յուրա-
 քանչյուր ազգության մասնակցության տոկոսը միանգամայն
 և ամբողջությամբ համապատասխանում ե տոկոսին. այսպես,
 գյուղխորհուրդներում հայերը $2^0/0$, ով պակաս են հայ բնակ-
 չության թվի համեմատությամբ, շրջգործկոմներում կազմում
 են $84^0/0$. ոռւսները $2,5^0/0$ գյուղխորհուրդներում և $2,43^0/0$
 շրջգործկոմներում։ Թուրքերն ունեն $11^0/0$ գյուղխորհուրդնե-
 րում և $10,9^0/0$ շրջգործկոմներում։ Թուրքերն ունեն գավգործ-
 կոմում ընդամենը $5^0/0$, ոռւսները $2-1,8^0/0$ ։ Վերջին հանգա-
 մանքը բացատրվում ե նրանով, վոր թուրք բնակչությունը
 կուլտուրապես ավելի հետամնաց ե և գավառական մասշտաբով
 բավարար քանակությամբ աշխատավորներ չի կարողանում
 առաջ քաշել, ինչ վերաբերում ե մյուս սակավաթիվ ազգու-
 թյուններին, ապա նրանց վերաբերյալ կարելի յեասել հետեւյալը.
 ասորիները, յեղիդիներն ու հույները ներկայացված են ստո-
 րին ապահարատներում բավարար քանակությամբ, վոր համա-
 պատասխանում ե նրանց տոկոսային հարաբերությանը։

Սոցիալական կազմի վերաբերյալ թվերը, վոր հիմա յես կհայտարարեմ, պետք ե ընդունել մեծ վերապահությամբ, քանի վոր այդ տեղեկությունները քաղված են անկետաներից, իսկ անկետաները շատ հաճախ լցվում են պատահական յեղանակով և առանց մտածելու։ Մենք ունենք չքավորության 52⁰/₀, մի թիվ, վորն, ինարկե, չափագանցված ե։ Ընդհանուր առմամբ պետք ե ասել, վոր մեր խորհուրդներն իրենց սոցիալական մասով միջակային ընավորություն են կրում. մեծ մասնակցություն են ցույց տալիս չքավորները, շատ անշան մասնակցություն՝ ունեորներն ու կուլակները—2⁰/₀, 4⁰/₀ ել բատրակները։ Կրկնում եմ, վոր այս տվյալները պետք ե ընդունել վորոշ վերապահությամբ։ Այս թվերը ցույց են տալիս, վոր, համենայն գեպս, իբր ընդհանուր յերեսույթ, մեր խորհուրդներում կուլակային տարրերի ճնշման համար հող գոյություն չունի, և վոր մեր խորհուրդների սոցիալական կազմն ամբողջությամբ համապատասխանում ե մեր գյուղի ընդհանուր դասակարգային շերտավորմանը։

Այս հաշվետու ժամանակաշրջանում գյուղում մեր մասսաների ակտիվությունը խոշոր չափով աճել է։ Նա կենտրոնացած ե վոչ միայն խորհրդային ապահարատաներում, մեր դյուղխորհուրդներում, այլ ե մեծ չափերով լցնում ե նաև մեր խորհրդային հասարակական որգանները՝ կոոպերացիաները, գյուղական փոխոգիոնները և մեր կուլտուր-կրթական որգանները՝ խրճիթ-ընթերցարանները։ Մենք ամեն կերպ շնորհ ենք գնում այդ ակտիվության։ Մենք հաշվում ենք, վոր նրանից գուրս մեր գյուղում չի կարող լինել վոչ կուլտուրական առաջխաղացում, վոչ ել սոցիալիստական շինարարություն։ Խորհրդային իշխանությունը չե, ինարկե, վոր պետք ե խոչընդուն հանդիսանա այդ ակտիվության հայտնաբերմանը. ընդհակառակը, նա պետք ե նրան այնպիսի ուղղություն տա, վոր այդ ակտիվությունն ստանա խորհրդային ինքնազործության, մասսաների ինքնազործության ձև, վորը կնպաստի գյուղատնտեսության և ընդհանրապես նրանց տնտեսության բարացմանը։

Դառնալով այն հարցին, թե մենք ինչպես ենք կառուցում նոր տիպի պետություն, ինձ թվում ե, թե զրա ամբողջական պատասխանի համար մենք պետք ե միքիչ ավելի բարձրանանք և գուրս գանք Հայաստանի սահմաններից, վորովհետեւ վոչ Հայաստանի կառավարությունը և վոչ ել նրա հետ միասին այդ յերկրի բանվորներն ու գյուղացիները, իրենց կղզիացած չեն զգում ամբողջ խորհրդային աշխարհից. նրանք Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ որից, իրենց համահայատանյան առաջին համագումարում, դրին Անդրկովկասյան Ֆեդերացիայի և Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ մտնելու հարցերը։

Ներկայումս Խորհրդային Հայաստանն իրեն զգում ե Անդրկովկասյան Ֆեդերացիայի և ամբողջ Միության մի անբաժանելի մասը և չի պատկերացնում իր հետագա սոցիալիստական զարգացումն այլ կերպ, քան անդրկովկասյան մյուս ժողովուրդների և ամբողջ Միության հետ սերտ միությամբ և կապերով։

Նոր տիպի պետությունը, իր սոցիալ-տնտեսական և ազգային բնույթի առանձնահատկություններով, իր հետագա ամրապնդման համար ներկայումս կարիք ե զգում, վոր հենց իր հիմքի, ստորին խորհրդային ապահարատի տրամադրության տակ դրվի տնտեսական ամենալայն բազա տեղական բյուջեյի ձևով։ Թույլ տվեք տեղական բյուջեն քննել հենց տվյալ կոմպլեքսի մեջ, վորովհետեւ խորհրդային ստորին ապահարատը կարող ե ամրանալ և կատարել իր դերն այն չափով, ինչ չափով վոր տեղական բյուջեն արյունառատ և իրական ե։ Այս բնագավառում, ընկերներ, պետք ե ընդդեմ միքանի մոմենտներ, վորոնք պետք ե վկայեն, վոր թեև այս գործը նոր ե և վերին աստիճանի գեֆիցիտային, սակայն խորհրդային ապահարատի համար տնտեսական բազա ստեղծելու գործնուղիղ ռելսերի վրա յե կանգնած։

Սկզբնական շրջանում, ամենից առաջ, տեղերում մենք հանդիպում ենքնք, կարելի յե ասել, վորոշ չափով սխալ և թեթևամիտ տեսակեաների տեղական բյուջեյի մասին, թե նա

սահմանափակում ե այս կամ այն աշխատավորի ինքնագործունեյությունը, մեր աշխատանքի մեջ ավելորդ ձևականություն է մտցնում և սահմանափակում և այն՝ հնարավորություն չտալով աշխատավորին ուզածին պես շարժվել յեղած միջոցների սահմանում։ Այժմ արդեն տեղական ընկերները գիտակցում են տեղական բյուջեյի կարևորությունն, իբրև Փինանսական գործունեյության ծրագիր։ Նրանք հանդես են բերում մեծ հետաքրքրություն և ուշադրություն գեպի այդ գործը, հանդես են բերում մեծ ցանկություն՝ ապրելու տեղական բյուջեյի սահմաններում և շրջանակներում։

Այս վերջին մոմենտը մեր ամենակարևոր նվաճումն ե, վորը պետք ե շեշտել, վորովհետև այստեղից ե սկսվում մեր ուղիղ աշխատանքը տեղերում։

Մեր տեղական բյուջեն բավական արագ ե աճում։

1923 թվի յերկրորդ կիսամյակի տեղական բյուջեն հավասար եր 1,400,000 ռուբլու, 1924 թվի հունվար-սեպտեմբեր ամիսներինը—1,700,000 ռ., և, վերջապես, 1924 և 1926 թվերին 3,800,000 ռ..

Մեր տեղական բյուջեն այժմ ավելի ուեալ ե դառնում, քան առաջ եր, վորովհետև այժմ ավելի յե արտահայտում տնտեսական և ֆինանսական հնարավորություններ, և գործադրական բյուջեն ավելի յե մոտենում ուղեցուցայինին (օրինականություն)։ Տեղական բյուջեն ներկայումս ավելի ուղիղ ե դրված, նրա առանձին բաղկացուցիչ մասերի մեջ ավելի նորմալ փոխարարերություն ե սահմանված, այսինքն մուտքի մասում՝ հարկային և վոչ-հարկային յեկամուտները, իսկ յեկի մասում՝ հիմնական խմբերի մեջ ծախսումներն ուղիղ և համաշափ կերպով բաշխելով։

Ահա այն նվաճումներն, ընկերներ, վոր մենք կարող ենք նշել մեր տեղական բյուջեյում։

Թույլ են մեր հաջողությունները տեղական բյուջեյի դիֆերենցիացիայի գործում, շրջանային, գավառային և քաղաքային բյուջեների բաշխման գործում։ Բայց դեռևս մենք այդ աշխատանքը չենք կատարել, մեր շրջանները, վոր Վրաստանի

թեմին և Աղբբեջանի դայրան չեն իրենց տերրիտորիայով և յեկամուտներով, տալիս են վորոշ և ավելի հնարավորություն տեղական շրջանային ռեալ բյուջե ստեղծելու, վորովհետև շրջաններն ավելի մեծ են այդ թեմիներից և դայրաններից։

Յեթե ամբողջ Հայաստանի բնակչությունը պետք ե հաշվել 1,000,000, իսկ շրջանների թիվը 40, ապա դուք տեսնում եք, վոր յուրաքանչյուր շրջանի կընկնի 25,000 մարդ։

Շրջաններ կան ավելի պակաս բնակչությամբ, շրջաններ ել կան ավելի մեծ բնակչությամբ, համենայն դեպս հասկանալի յե, վոր տեղական բյուջեն այդպիսի տերրիտորիայի վրա, այդպիսի բնակչությամբ ավելի շուտ վոտքի կկանգնի, քան թեմին և դայրայում։

Սակայն ինչպես դիֆֆերենցիացիայի ինդրում, այնպես ել մեր բյուջեյի գործադրման ժամանակ մենք հանդիպում ենք մեծ դժվարությունների։ Տեղական բյուջեյի իրականացումն ամբողջ Հայաստանում հավասարվում ե 57%։ Պետք ե ասել, վոր այդ տոկոսը բավականին ցած ե, իսկ դիֆֆերենցիացիայի խնդրում գավառներինը կազմում ե 54,9%, քաղաքներինը՝ 65,9%, իսկ շրջանների բոլոր յենթադրությունների գործադրությունը՝ 34%։

Այսպիսով դուք տեսնում եք, վոր խորհուրդների աշխատացման և մասսայական աշխատանքի բուռն արտահայտության ու ամբողջ գյուղացիական ակտիվի տնտեսական բազան դեռ բավականին թույլ ե, այդ պատճառով դեռ վաղաժամ ե խոսել իսկական աշխատացման և լայն մասսաներին փաստորեն խորհրդային շինարարության մեջ քաշելու մասին։

Յերկրորդ և ամենահիմնական հարցի վերաբերյալ, այն ե՝ թե ինչպես և ինչ ուղղությամբ ե աճում Հայաստանի տնտեսությունը, թույլ տվեք ամենից առաջ վորոշել ճիշտ փոխարաբերությունը մեր անտեսության յերկու հիմնական ճյուղերի՝ գյուղական տնտեսության և արդյունաբերության։ Այստեղ չպետք ե լինեն իլլյուզիաներ, այստեղ չպետք ե լինեն սխալ բնորոշումներ, վորովհետև դրանք կհասցնեն շատ տխուր սխալների, դրանք կարող ելին խեղաթյուրել մեր վողջ քաղաքա-

կան գիծն այստեղ, կարող եյին վտանգավոր լինել այն բան-վորա-գյուղացիական բլոկի համար, վորը մեր սոցիալական կարգերի հիմքն ե կազմում։ Այստեղ, կրկնում եմ, պետք ե լինի ամենառաջադիր վերաբերմունք, և չպետք ե յենթարկվել հրապուրանքի ու իլլյուզիայի։

Արդյունաբերության դերը Հայաստանում համեմատաբար փոքր ե։ Նախ և առաջ, գյուղատնտեսությունն ե կազմում բնակչության հսկայական մեծամասնության գլխավոր զբաղմունքը, բացի այդ, ամբողջ գյուղատնտեսության տեսակառար կշիռը յերկրի ընդհանուր եկոնոմիկայում անչափ ավելի բարձր ե մեր այժմյան արդյունաբերության տեսակարար կըշուից։ Յեթե անցյալ տարվա արդյունաբերության ընդհանուր արդյունքը, կոպիտ թվերով վերցրած, մոտավորապես 7—8 միլիոն չերվոն ոռութիւն յեր, ապա գյուղական տնտեսության ընդհանուր արդյունքը, ներկա տարվա համար, հաշվում ե 29 միլիոն նախապատերազմյան ոռութիւն, $4\frac{1}{2}$ միլիոն ապրանքային զուտ արդյունքով։

Հասկանալի յե, վոր անցյալ ամբողջ 4 տարիների ընթացքում մեր ուշադրության և հոգատարության կենտրոնը կազմել ե գյուղական տնտեսությունը, և այլ կերպ չեր ել կարող լինել։ Բայց այդ դեռ չի նշանակում, վոր սխալ ե այն կուրսը, վորը վերցրել ե խորհրդային իշխանությունը վերջին տարվա ընթացքում։ այն ե՝ Հայաստանում արդյունաբերական ոջախներ ստեղծելու կուրսը։ Այդ կուրսը միանգամայն ուղիղ ե, և Հայաստանում Խորհուրդների վերջին Համագումարը շեշտեց այդպիսի գործարանային-արդյունաբերական ոջախներ ստեղծելու անհրաժեշտությունը։ Ընդգծեց նաև մեր աշխատանքի ուժեղացման անհրաժեշտությունը, ուշադրություններս վորոշ շափով դարձրեց գործի այդ կողմի վրա և պարտավորեցրեց Հայաստանի Կառավարությունը՝ նվիրել արդյունաբերության այդ ճյուղին ավելի մեծ ուշադրություն, քան այդ ակամա արել եր նա մինչև այժմ։

Մենք ժառանդել եյինք այնպիսի մի տնտեսություն, վոր հասել եր ծայրա ստիճան անկման։ Յեթե մեր տնտեսու-

թյունը վոչ այլ ինչ եր, յեթե վոչ 160 հազար մանր, բաժանքաժան և ցրիվ յեկած տնտեսությունների մի միավորում մի փոքրիկ կտոր հողի վրա, յեթե այդպիսի տնտեսությունը պատերազմից առաջ ել առանձնապես յեկամտաբեր չեր կարող լինել, ապա իմպերիալիստական պատերազմի և ազգային խժդությունների ժամանակ Հայաստանի գյուղական տնտեսությունը վոչ միայն բանակով ե ընկնում՝ հասնելով ծայրահեղականի, այլ և նա գորոշակի կերպով դեղբաղացիայի յե յենթարկվում։ Մինչև Հայաստանի խորհրդայնացումը գյուղական տնտեսությունը զրկվել եր բարձր տեխնիկական կուլտուրայից։

Մեր բազմաթիվ շրջաններում ջրային սիստեմը հասած եր ծայրահեղական ավելման։

Տեխնիկական բարձր կուլտուրա ունեցող յերկրները և շրջաններն անցնելով պրիմիտիվ և ավելի թեթեւ հացահատիկային կուլտուրաների, կանգ չեն առնում համեմատաբար բարձրորակ հացահատիկի՝ ցորենի մշակության վրա, այլ գնում են ավելի հեռուն, հասնելով մինչև գարին, նույնիսկ մինչև կորեկը։ Մեր յերկիրն այն ժամանակ գտնվում եր ֆիզիկական և ֆիզիոգիական այլասերման յեղբին։

Այսպիսի պայմաններում պետք եր ամեն ինչ սկսել նորից։

Մեր գյուղական տնտեսության առանձնահատկությունն այն բացառիկ սակավահողությունն ե, վոր հատուկ ե նրան և վորը չի հերքում վոչ մի հետազոտողի կողմից։ Ներկայումս մեզ մոտ կան շրջաններ, վորաեղ ամեն մի շընչին 0,5 դեսյատինից ավելի պակաս հողաբաժին ե ընկնում։ Կան նաև այնպիսի շրջաններ, վորաեղ հողը շնչերի վրա յեն բաժանում վոչ թե գեսյատիններով, այլ սաժեններով ինչպես, որինակ, Մեղրու շրջանում։ Այս սակավահողությունն ստեղծել ե յերկրում ազգարային գերբնակչություն (перенаселение), վոր միքանի տասնյակ հազար հոգու յե հասնում և վորը հող ե պատրաստել զանազան կողմանի արհեստների համար՝ Հայաստանի սահմաններից դուրս։



Այս բացառիկ սակավահողության հետ միասին, մեր տնտեսությունը աչքի յե ընկնում իր ցած տեխնիկայով և անմիջական արտադրողի՝ մեր գյուղացու բավականին մեծ չափի հասնող կուլտուրական հետամնացությամբ:

Հայաստանի կառավարությունը, բնականաբար, ստիպված էր հաշվի առնել բոլոր այդ յերևույթները, այդ ծանր ժառանգությունը: Բայց վորպեսզի կարելի լինի ճշտությամբ և մանրամասնորեն բնութագրել, թե ինչքան ուժեղ եր մեր գյուղական տնտեսության անկումը, թույլ տվեք բերել միքանիթվեր, վոր կընորոշեն ցանքսերի և անասնաբուծության կրծառումն իմալերի ալիստական պատերազմից հետո: Համեմատության միավորը կլինի նախապատերազմյան մակարդակը:

1922 թվին մեր բոլոր հացահատիկային ցանքսերի տարածությունը կրծառվել եր մինչև նախապատերազմյան մակարդակի $30^0/_{\circ}$. 1922 թվից սկսում ե ընդարձակվել, արագ թույզը ե կատարվում, 1922 թվին հասնելով մինչև $74^0/_{\circ}$, այսուհետև բարձրանում ե դանդաղորեն և հասնում ե 1925 թվին մինչև նախապատերազմյան մակարդակի $80,8^0/_{\circ}$ -ին:

Մեր տեխնիկական, արժեքավոր կուլտուրաները, ինչպես բամբակն ու խաղողը գաշտային շրջաններում, այդ ժամանակավա ընթացքում համարյա վերանում են, հատկապես բամբակը: 1922 թվին մենք ունեինք ընդամենը $150-200$ դեսիտին բամբակ: Մի տարվա ընթացքում տեխնիկական կուլտուրան՝ բամբակը թույզը մինչև $41^0/_{\circ}$ -ի, 1924 թվին մինչև նախապատերազմյան մակարդակի $141^0/_{\circ}$ -ին: Ընդամենը յերկու տարվա ընթացքում բամբակը մեզնում վոչ միայն վերականգնում ե, այլ շատ յետ ե թողնում նախապատերազմյան մակարդակը: Հետեւյալ, 1925 թվին, վոռոգման պակասության պատճառով, մեր բամբակը մի փոքր կրծառվում ե՝ հասնելով նախապատերազմյանի $132^0/_{\circ}$ -ին:

Գյուղական տնտեսության բարձրացման մեր յենթադրությունների մեջ աչքի ընկնող գեր պիտի կատարի խոտացանքը, վորը 1919 թվին կազմում եր նախապատերազմյան մակարդակի $4,4^0/_{\circ}$ -ը: Չնայած խոտացանության տված բոլոր

արտօնություններին և աջակցությանը, մենք կարողացել ենք բարձրացնել այն 1921 թվին միայն մինչև $57^0/_{\circ}$:

Յուղ արտադրող կուլտուրաները, ինչպես քննիթը, կտակ-հատը և կանեփն անցել են մինչ-պատերազմյան մակարդակից՝ հասնելով մինչև $138^0/_{\circ}$:

Ընդհանուր առմամբ և ամբողջությամբ վերցուած, ցանք-սաղաշտերի շարժումն ամբողջ Հայաստանում այնպես ե, վոր մենք խորհրդայնացման 4 տարվա ընթացքում 1922 թվի 30 տոկոսից բարձրացրել ենք ամբողջ Հայաստանում մինչև $90^0/_{\circ}$: Մի շարք գավառներում մենք անցել ենք նախապատերազմյան մակարդակից:

Ցանքսաղաշտի մեծացման տեսակետից առաջին տեղը բռնում ե Զանգեզուրի գավառը, վորտեղ նա հասցրված ե մինչև $118^0/_{\circ}$ -ի: Ցերկանում հասցրված ե $108^0/_{\circ}$ -ի, Նախի-ջևանում՝ $105^0/_{\circ}$ -ի և Եղմիածնում՝ $66,8^0/_{\circ}$ -ի:

Ամենից շատ յետ ե մնացել Եջմիածնի գավառը:

Ինչ վերաբերում ե այգեգործությանը, պետք ե ասեմ, վոր այդ բարձր կուլտուրան գտնվում ե աճման այնպիսի աստիճանի վրա, վոր դեռ շատ բան կա անելու:

Ամենից առաջ, այգիների տարածությունը նախապատերազմյանի համեմատությամբ կրծառվել ե և $10,065$ դեսիտինից իջել ե մինչև $7,500$ դեսիտինի:

Այգեգործության բնույթը մնում ե դարձալ նույնը՝ մանր աշխատանքայինը: Միջին թվով, $0,5$ դեսիտին յուրաքանչյուր տնտեսության համար ամբողջ Հայաստանում, իսկ առանձին գավառներում այդ մանր տնտեսությունները տատանվում են $0,19$.ից մինչև $0,75$ դեսիտինի մեջ:

Իհարկե, խաղողի բերքը նույնպես ընկել ե, մինչ-պատերազմյան ժամանակի հետ համեմատած. բայց իմպերիալիստական և ազգայնական պատերազմների շրջանի համեմատությամբ բարձրացել ե:

Այգեգործության սիստեմը մնում ե հինը, թմբայինը, վորը հնարավորություն չի տալիս մեքենայացնել մշակությունը և, ուրեմն, չի պակասեցնում մշակելու ծախսերը: Յես դեռ չեմ

խոսում այն մասին, վոր այգեգործության բնագավառում մեզ սպասում ե հսկայական աշխատանք՝ անցնելու նպատակահարմար, տնկաշարքային սիստեմին, նպատակահարմար մշակության ձևերին, խաղողի բարձր տեսակների՝ դեսերտային և բժշկական խաղողների մշակմանը։ Այդ բնագավառում մեզ սպասում ե հսկայական աշխատանք, շատ ավելի, քան մինչ այժմ եր։

Խաղողը զանազան տիպի հիվանդություններից բժշկելու հարցի վերաբերյալ պետք ե նշել ցրտահարությունից վնասված այգեգործության վիճակը, վորը բավականին մեծ վնաս ե կրել։

Ընդհանուր առմամբ հիվանդ դուրս յեկավ մեր այգիների $61^0/0$ -ը։

Այս տարի խաղողի բերքը նույնպես ընկավ $30^0/0$ -ով։

Անասնապահության խնդրում մենք ներկայումս հատուկ ուշադրություն ենք դարձնում խոշոր արդյունաբեր անասունների վրա։ Մենք խստ շահագրգուված ենք խոշոր անասնապահության վերականգնմամբ, մի կողմից արդյունաբեր անասնապահությամբ և մյուս կողմից խոշոր յեղջերավոր լծկան անասուններով։

Ընդհանուր առմամբ խոշոր արդյունաբեր անասնապահությունը մեզ մոտ, նախապատերազմյան ժամանակի հետ համեմատած, բավականին ցած ե կանգնած։ Բայց և այնպես այդ բնագավառում վորոշ նվաճումներ ունենք։ Այդ ժամանակա ընթացքում մեզ հաջողվել ե նախապատերազմյան ժամանակի $33,57^0/0$ -ից արդյունաբեր անասնապահությունը բարձրացնել մինչև $61^0/0$, ինարկե, դա յել նվաճում ե, բայց շատ նվազ, յեթե ինկատի ունենանք այն հեռանկարները, վորն ունի մեր անասնապահությունը։

Խոշոր յեղջերավոր անասունները, ընդհանուր առմամբ, 1919 թվի $33^0/0$ -ից հասցըված են նախապատերազմյան ժամանակի $92,86^0/0$ -ին։

Լծկանների վերականգնումը համեմատաբար թույլ ե ընթանում։ 1915 թվի $30,63^0/0$ -ից ներկայումս մենք ունենք $52^0/0$, բոլոր խոշոր յեղջերավոր անասունների վերականգնման ընդ-

հանուր տոկոսը ներկայումս հավասար է $80,20^0/0$ -ի։ Այս բնագավառում մենք չենք կարող առանձնապես պարծենալ և հանգիստ լինել, վորովհետեւ խոշոր յեղջերավոր անասուններն են հանդիսանում այժմ մեր գյուղական տնտեսությունների բեռնակիր և լծկան գլխավոր ուժը։ Յեթե մենք չենք կարողացել այս հինգ տարվա ընթացքում ամբողջությամբ վերականգնել այն, առաջ շատ պարզ ե, վոր գյուղական ինվենտարը հսկայական վնաս ե կրել։ Հենց մեր գյուղական տնտեսության ինվենտարից զուրկ լինելն ե հանդիսանում մեր հիմնական չարիքն ու դժբախտությունը։ Գործն անմիտիթար վիճակի մեջ ե վոչ միայն կենդանի ինվենտարի վերաբերյալ, այլև մեռյալ ինվենտարի։ Այդ ասպարիզում իմպերիալիստական պատերազմի ժամանակ տեղի յե ունեցել կատարյալ ամայացում։ Նախապատերազմյան շրջանի $17,000$ գութանից 1920 թվին մասցել եր միայն $5,000$ գութան։ Յեթե պատերազմից առաջ յուրաքանչյուր գութանին ընկնում եր 15 դեսիատին վարելահող, ապա ներկայումս յուրաքանչյուր գութանին ընկնում ե $25^{1/2}$ դեսիատին։ Այսպիսով, ուրեմն, մինչև հիմա յել գյուղական ինվենտարն ու արտադրության միջոցները գտնվում են բավականին վողբալի դրության մեջ։

Հայաստանի Խորհուրդների 3-րդ Համագումարն ուշադրություն դարձրեց այդ հանգամանքի վրա և առաջարկեց կառավարությանը ամենալուրջ միջոցներ ձեռք առնել յերկիրը և գյուղական տնտեսությունն ինվենտարիզացիայի յենթարկելու համար։

Այստեղ մեր առաջ հարց բարձրացավ դեպի ուղղել ինվենտարիզացիան։ Վորոշ շրջաններում գյուղացիները տարերային կերպով ձգտում են մեքենայացնել արտադրությունը։ Նրանք մեծ համառությամբ պահանջում են մեզնից տրակտորներ։ Մենք մտածում ենք ամենալայն կերպով նրանց ընդուած գնալ։ Բայց և այնպես մեր առաջ կանգնած ե գյուղական տնտեսություններին կենդանի և մեռյալ ինվենտար մատակարարելու հիմնական խնդիրը։ Այդ նպատակին ել ուղղում ենք մենք մեր գյուղատնտեսական վարկի մի խոշոր մասը։

Այդ նպատակին ե գնում նաև հատուկ ֆոնդը, վոր այսպես կոչված ինվենտարիզացիայի ֆոնդ անվան տակ ստեղծել ու կազմակերպել ե Հայաստանի կառավարությունը՝ Յ հազար ոռուբ- լու սահմանում։ Խոշոր արդյունաբեր անասունները հետաքըլ- քըլում են մեզ մեր տնտեսության զարգացման տեսակետից, վոր մեր պայմաններում պիտի ունենա կուլտուրականորեն կանոնագործած, հաստատում և բավարար չափով կոռպերաց- ման յենթարկված անասնապահություն։ Այդ տեսակետից այն պայմանները, վոր մեզ մոտ կան, բարեհաջող են։

Կերի միջոցների հարցը Հայաստանում վճռվում ե միան- դամայն նպատավոր կերպով։ Մեզ մոտ այդ խնդրի հաջող լուծման համար բոլոր նախապայմանները կան։ Նախ և առաջ, մեզ մոտ կան ալպյան արոտատեղիներ և մարգագետիններ 550,000 դեսիատին տարածությամբ, այսինքն, յեթե համե- մատենք շվեյցարական արոտատեղիների հետ, մեզ մոտ արո- տատեղիներն ավելի յեն 30° -ով գյուղատնտեսների վկա- յությամբ, դրանք բովորովին յետ չեն մնում շվեյցարական ա- րոտատեղիներից։ Յերկրորդ, մեզ մոտ լիակատար հնարավո- րություն կա զարգացնել կերախոտերի և արմատապտուղների (корнеплодов) ցանքսը. և վերջապես, հենց գյուղացիության մեջ նկատելի յե վորոշ թեքում դեպի անասնապահության ու արդյունաբեր կաթնատնտեսության զարգացումը։ Այդ թե- քումն հատկապես ուժեղ նկատելի յե այն շրջաններում, վոր- տեղ տնտեսության այդ ճյուղը զարգացած ե յեղել, ինչպես, որինակ՝ Նոր-Բայազետում և Դիլիջանում։ Զանգեզուրում գրու- թյունը բավականին անմիտթար ե. ունենալով մեծ քանակու- թյամբ արոտատեղիներ, Զանգեզուրն, այնուամենայնիվ, չի մտածում ձեռք քաշել հողագործությունից և անցնել ռացիո- նալ անասնապահական տնտեսության։

Ներկայումս ալպյան անասնապահության զարգացման խնդիրը մեր տնտեսական քաղաքականության հերթական իրն- դիրների մեջ առաջնակարգ տեղ է գրավում։ Անասնապահու- թյան մյուս ճյուղերի վրա թույլ տվեք կանգ չառնել, քանի վոր մեր հիմնական կուրսն անասնապահության և կենդանա-

բուծության զարգացումն ե մեր ալպյան բարձրությունների վրա, և զլխավորապես կաթնատու անասունների արդյունա- վետությունը։

Ընկերներ, յեթե դաշտային շրջաններում մենք տանում ենք բարձր տեխնիկական կուլտուրաների զարգացման գիծ, իսկ ալպյան բարձրություններում մենք պետք ե զարգացնենք կուլտուրական գոմային (стойловая) կաթնատնտեսություն, ապա նախալեռնային շրջաններում մենք ստիպված պիտի լինենք հացահատիկային հիմնական կուլտուրաները միացնել այն հնարավորությունների հետ, վոր ներկայացնում են այդ շրջաններն իրենց կիմայական և հողային պայմաններով։

Միայն խորհրդային իշխանության հաստատվելուց հետո հայտնի գարձավ, վոր Հայաստանը կարող ե դառնալ ծխախո- տի արդյունաբերության յերկիր, վոր, հատկապես Հայաստանի լեռնային և մերձ-լեռնային շրջաններում, ծխախոտի բարձր տեսակների համար կան բոլոր պայմանները։

Այն հաջողությունները, վոր ներկայումս մենք ունենք այդ ասպարիզում, վորոշ չափով արժանանում են գյուղացի- ության քաջալերանքներին։ Դրանք մեզ լիակատար հիմք են տալիս հենվելու գյուղատնտեսության այդ ճյուղի վրա, իբրև մեր մերձ-լեռնային շրջանների հիմնական ճյուղերից մեկի վրա։ Հենց այստեղ, մերձ-լեռնային շրջաններում ան- մեկի վրա, կանդ առնել տնտեսության այնպիսի ճյուղերի հրաժեշտ ե կանդ առնել տնտեսության այնպիսի ճյուղերի վրա, վորոնք կարող են ունենալ միայն ոժանդակող նշանա- կություն։ Դրանցից, առաջին հերթին, զլխավորն ե շերամա- պահությունը։ Մենք շատ լրջորեն յենթագրում ե կարծում ենք, պահությունը։ Մենք շատ լրջորեն յենթագրում ե կարծում ենք, վոր գյուղական տնտեսության վերոհիշյալ ճյուղը, վորն ինչ- ինչ պատճառով չի լինամքում Հայաստանում, ունի ըո- լոր շանսերն ու հնարավորությունները լիակատար զարգացման համար։

Մյուս կողմից, մեղվաբուծությունը, վորը յերկրի անտեսական կյանքում առանձին դեր չի խաղում, գյուղացի- ների բյուջեյում մինչև այժմ ել ունի բավականին խոշոր նշանակություն։

Թույլ տվեք այժմ, ընկերներ, անցնել այն հարցին, թե
մենք ինչ նոր կապիտալներ ենք մտածում մացնել, և մասամբ
արդեն մտցրել ենք գյուղական նոր տնտեսության մեջ: Հիմնա-
կանը, վորն այստեղ պետք է նշել իբրև վորոշ նվաճում,
այն միջզյուղային հողաշինարարությունն ե, վորը հինգ տար-
վա ընթացքում մեզ հաջողվել ե անցկացնել գյուղում: Մենք
այժմ միջզյուղային հողաշինարարության գլավոր մասը վեր-
ջացրել ենք ամբողջ հանրապետության մեջ: Բնականաբար
բացեր կան. դեռևս այս կամ այն շրջանի առանձին
գյուղերի մեջ շարունակվում են վեճերը. հասկանալի յե, վոր
վորոշ մասերում անհրաժեշտ կլինի նորից վերաքննել այն, ինչ
մինչև այժմ արված ե. բայց ամբողջությամբ վերցրած, միջ-
զյուղային հողաշինարարությունը մենք հաշվում ենք արդեն
հիմնականորեն վերջացրած, և այն նվաճումները, վոր մեղ
տվել ե միջզյուղային հողաշինարարությունը, մեր յերկրի
ընդհանուր եկոնոմիկայում այնպիսի մի հսկայական պլյուս
ե, վոր կարժե կանգ առնել նրա վրա միքանի ըոպե:

Հողաշինարարության հետեանքով, հողային միջասահմանը
մեզ մոտ հասցըված ե մինիմումի: Յեթե առաջ մի տնտեսու-
թյան պատկանող հողաբաժինը բաղկացած եր 25, նույնիսկ
45 առանձին, մանր հողամասերից, ապա ներկայումս, միջ-
զյուղային հողաշինարարությունից հետո, մի տնտեսությանը
թողնված ե վոչ ավելի, քան մինչև վեց հողամաս: Յերկրորդ,
վոչ աշխատավորական տարրերը. միանդամայն «ազատված
են» հողից: Այժմ մենք կարող ենք վորոշակի հայտարարել,
վոր ամբողջ Հայաստանում վոչ մի կալվածատեր չի մնացել
իր կալվածքում, և այն բոլոր վոչ-աշխատավորական տար-
րերը, վորոնք առաջ մեծ քանակությամբ հողեր եյին կենտրո-
նացրել իրենց ձեռքում, այժմս վոնդված են գյուղերից: Նույն-
իսկ կալվածատիրական ծագում ունեցող այն քաղաքացիները,
վորոնք կտրվել են հողից, հողաբաժանության ընթացքում այդ
ընդհանուր միջզյուղային հողաշինարարության կարգով զըրկ-
փում են հողից: Իմպերիալիստական պատերազմի ժամանակ
Հայաստանում պատսպարված 102.500 գաղթականներից 64

հազարը, այսինքն $63^0/_{\circ}$ ը, մեզ մոտ տեղափորվել և բավա-
րարվել են հողով: Մնացած 38.000 գաղթականներին բավա-
րարելու հարցը մեզ մոտ հերթական ե:

Այստեղ, թույլ տվեք, միքանի խոսքով կանգ առնել
այսպես ասած գաղթականական խնդրի վրա:

Մեր քաղաքացիներից շատերը գաղթականական հարցը սո-
վորաբար կապում են արտասահմանյան գաղթականներին ըն-
դունելու հետ, վորը վերջին ժամանակներս պարբերաբար
տեղի յե ունենում: Պետք ե ասել, վոր այստեղ հիմնական գիծը
գյուղատնտեսական և արդյունաբերական գաղթականների ըն-
դունելությունն ե: Գաղթականների մասին ունեցած շատ-շա-
տերի այն տեսակետը, թե գաղթականը մի «սոցապային»
տարր ե՝ ամեն ինչից զուրկ, վերջին ժամանակներս տեղի յե
տալիս մի այլ հասկացողության, այն ե, վոր գաղթականը գյու-
ղատնտեսական աշխատավոր և արդյունաբերական բանվոր ե,
վորին մենք ներս ենք ընդունում արտասահմանից: Այդ ե մեր
վերաբերմունքի և քաղաքականության հիմնական գիծը մատ-
նանշված խնդրում:

Բացի անհող մնացած գաղթականներից, Հայաստանում
գտնվում են մեծ չափով չքավոր տարրեր, վոր կազմում են
գերբնակչություն ունեցող գյուղի մի շերտը և վորոնք
կարիք ունեն մեր ողնության: Մենք կարծում ենք, վոր հո-
ղային տեսակետից գերբնակված գյուղացիությունը, վորը
հանդիսանում ե գյուղի յերկրորդ հիմնական չարիքը, հսարա-
վորություն չպիտի ունենա մեր արդյունաբերական ձեռնար-
կություններում իր համար շուտ աշխատանք դանելու, վորովհե-
տե մեր արդյունաբերությունը չի կարող այնպիսի տեմպով
զարգանալ, վոր կարողանա կանել գերբնակված գյուղի ընակ-
չության ավել մասը: Ներկայումս մենք պետք ե ձեռք առ-
նենք ամենալուրջ միջոցներ՝ այդ տարրին հողի վրա տեղավո-
րելու համար, գերադաս համարելով սրանց այն գաղթականնե-
րից, վոր մեզ մոտ գալու յեն արտասահմանից:

Ազգային փոքրամասնությունների հողաշինարարության
վերաբերյալ մենք պետք ե ընդգծենք յերկու մոմենտ: Նախ,

մեր թուրք քաղաքացիները հողաշխարարության հետևանքով՝
վոչ միայն հայ բնակչությունից ավելի վատ պայմաններում
չեն, այլ և տեղ-տեղ լավ կերպով ապահովված են հողով:

Հողաշխարարության բնագավառում ամենակարևոր խըն-
դիրներից մեկը հանդիսանում է արոտաշխարարությունը,
ինչպես ձեզ հայտնի յե, այդ հարցը խորը կերպով հետաքըլ-
քըրում ե վոչ միայն տեղական հայ բնակչությանը, այլ և
Աղբբեջանի քոչվորներին, և վորոշ չափով նրանց նույնիսկ
ավելի, քան հայ բնակչությանը: Անցյալ տարի Հողժողկոմը
պարզեց, վոր այստեղի 380.000 գետատին արոտատեղիների ց.
56% ընկնում և Աղբբեջանի քոչվորներին, և միայն 44% օւ-
տեղական հայ և թուրք բնակչությանը:

Դնելով արոտատեղիների կարգավորման հարցը, հասկա-
նալի յե, վոր չի կարելի վոչ մի դեպքում հարց հարուցիւ-
նրան մեքենայական կամ բռնազբոսիկ լուծում աալու մասին:
Այդ մեր գիծը չե, մեր քաղաքականությունը չե. դա մեզ
խորթ ե և հակառակ: Սակայն այստեղ պետք ե ընդգծել այն
հանգամանքը, վոր տեղական բնակչությունը՝ թե թուրք և թե
հայ, մեր առաջ հարց ե հարուցում այդ արոտատեղերի բա-
րեխիղ կարգավորման մասին: Անդրկենտգործկոմը մի հասուն
հանձնաժողով եր հաստատել, վորն աշխատում եր Դիլիջանի
գավառում: Իմ կարծիքով, նա խնդրին պետք ե մոտենա ի՞՛
ամբողջ ծավալով: Նա պետք ե դրա հետ միասին դնի վոչ
միայն Դիլիջանի գավառի, այլ և բոլոր մնացած գավառների
արոտատեղերի հարցը: Մեր այդ հանձնաժողովը պետք ե ավե-
լի յեռանդուն աշխատի, քան աշխատել ե մինչ այժմ: Մենք
հաշվում ենք, վոր այդ հարցը մի պրոբլեմ ե, վորն իր լու-
ծումն սպասում ե Անդրկովկասյան կենտրոնական Գործադրի
Կոմիտեյից:

Մենք կարծում ենք, վոր այս հարցում ազգային անհասկա-
ցողությունների համար հնարավորություններ կան, բայց մենք
միաժամանակ կարծում ենք, վոր բոլոր միջոցները կողըծագըլ-
վեն, վորպեսզի անհասկացողությունները համան մինիմումի և
ամենից առաջ զրկվեն այն ազգայինական սուր բնույթից, վորով

այդ խնդիրն աչքի յեր ընկնում դաշնակցականների և մուսավա-
թականների որով: Մենք միանգամայն և ամբողջովին հավատա-
ցած ենք, վոր այդ հարցն այնպիսի գետնի վրա չի դրվիլ և այն-
պես սուր կերպարանը չի ստանալ, ինչու 1919—1920 թվա-
կին, զաշնակների և մուսավաթականների տիրապետության
ժամանակ: Մենք հավատացած ենք նաև նրանում, վոր ինչ-
պես Անդրկովկասյան կենտրոնական Գործադրի Կոմիտեն,
այնպես ել Հայաստանի և Աղբբեջանի աշխատավորները, արո-
տատեղերի կարգավորման խնդիրը կվճռեն յերկու յեղայրա-
կան հանրապետությունների աշխատավորության փոխադարձ
բարորության տեսակետից:

Մնում ե միքանի խոսք ասել գյուղական հողաշխարա-
րության (հողաբաժանման) մասին: Այս հարցին սերտ կերպով
և մասամյուրեն մենք մոտեցել ենք միջուղական հողաշխարա-
րության հետ միաժամանակ: Սակայն միջուղական հողա-
շխարարությունը կրում է միայն ժամանակավոր բնույթ և
իրեն մշտական հողաշխարարություն նա սկսում է իրագործ-
վել միայն անցյալ տարվանից: Այս տարի աշխատանքի թափու-
այդ բնագավառում միքիչ ուժեղացած եր, այնպես վոր Հող-
ժողկոմը գյուղական հողաբաժանությունը խոստանում է վեր-
ջացնել այս տարվա՝ 1926 թվի վերջին:

Ամենահիմնական հարցը, վոր այդ բնագավառում մեր
առաջ կանգնած ե, հողոգտագործման ձեր հարցն ե: Գյուղա-
ցիությունը մղում է մեզ դեպի նրա լուծումը: Մեր հողային
որենսգիրքը նախատեսում է հողոգտագործման յերեք ձե, և
սակայն, տիրապետողը մեզ մոտ համարյա բացառապես հան-
գիսանում է համայնական հողոգտագործման ձեր, թեպետ ա-
ռանց պարտադիր ցանքսափոխության: Մտածում է արդյոք
Հայաստանի գյուղացիությունը հողոգտագործման այդ համայ-
նական ձեր անցնել ծխական (подворной) կամ ընկերական
ձեին և մտադիր է արդյոք գյուղացիությունը հողոգտագործ-
ման համայնական ձեր հրաժարվել. մենք լրջորեն չենք ստու-
գել այդ: Համենայն դեպս, այդ խորհրդային իշխանության և
գյուղացիության փոխարարերության նրբագույն շրջանն ե,

վորը մեզնից պահանջում եւ գերազանց զգուշություն, ուշադիր վերաբերմունք և խիստ փափկանկատություն, ինձ թվում եւ, վոր գյուղացիությունը, հողոգտագործման այս կամ այն ձեռն անկացնելիս, վոչ մի վարչական միջամտություն չի հանդուրժի: Այստեղ կիրառվող մեթոդը պիտի լինի համոզման այն մեթոդը, վորը մեզ հանձնարարում եր ընկեր Լենինը. այստեղ անհրաժեշտ ե համբերող, սպասողական վերաբերմունք: Այստեղ վճռող մոմենտը պետք ե լինի գյուղի արտադրական ուժերի աճումը, վորը կթելագրի գյուղացիությանը հրաժարվել հողոգտագործման համայնական ձեր և անցնել ընկերական ու կուլտակավագներին: Համենայն դեպս, մեր քաղաքականությունը գյուղացիության այդ բնագավառում զգուշավոր ե: Մենք հաշվի յենք առնում հասունության աստիճանը: Մենք պատրաստ ենք սպասել, մինչև գյուղացու արտադրական ուժի աճումը հասցնի նրան այն գիտակցության, թե հողոգտագործման համայնական ձեր հարկավոր ե գերազասել մի ուրիշ ձե:

Համենայն դեպս, կառավարությունը պատրաստվում ե հողաշնարարությունն անցկացնել ամբողջապես ու լիակատար կերպով, և այդ նպատակով մենք վորոշել ենք ոգտագործել բոլոր տեղական տեխնիկական ուժերը, վորոնք թեև բավականաչափ վստահելի չեն, սակայն փորձված են գործի համար: Դրանք տեղական շաբրարներն են: Առանց նրանց մենք չենք կարող յոլա գնալ, վորովհետեւ մենք չունենք հողաշափերի այնպիսի կադր, վորը կարողանար աշխատանք կատարել հարկ յեղած արագությամբ, վորովհետեւ գյուղացիությունը և առանձնապես նրա չքավոր շերտերը չեն ուղում սպասել:

Ընկերներ, մեր գյուղական տնտեսության ընդհանուր բնութագիրը, ինչպես այդ յերեսում ե իմ յերեկվա զեկուցումից, հանգում ե նրան, վոր մենք ունենք իմպերիալիստական պատերագմի շնորհիվ կատարյալ անկման հասած մի տնտեսություն՝ շատ ցածր բերքատվությամբ: Խորհրդանացման ժամանակվանից սկսած գյուղատնտեսությունն սկսեց վերականգնվել: Այդ վերականգնման թափը հատկապես բուռն կերպով արտահայտվեց 1923-ին, վորն առհասարակ այդ տեսակետից հանդիսանում ե

իբրև վճռող տարի: 1925 թվին գյուղատնտեսության միքանի ճյուղերը հասան մինչ-պատերազմյան մակարդակին, մյուսները մոտենում են նրան, իսկ ընդհանրապես, մենք սպասում ենք, վոր ընթացիկ 1926 ոպերացիոն տարում մեր գյուղական տնտեսությունը յեթե չհասնի մինչ-պատերազմյան մակարդակին, գեթ շատ մոտենա նրան:

Մեզ մնում ե նշել այժմ այն հիմնական գծերը, վորոնցով, հետագայում, պետք ե ընթանա մեր գյուղատնտեսությունը, այսինքն՝ գյուղական տնտեսության արտադրական ուժերի ուղղության և աճման գծերը: Ամենից առաջ հարկավոր ե մեր ամենալուրջ ուշադրությունը դարձնել այն անհեթեթությունների վրա, վոր կան մեր գյուղատնտեսության մեջ: Ներկայումս, առաջին իսկ հերթին, մեզ անհրաժեշտ ե լիկվիդացիայի յենթարկել հենց այդ: Այդ անհեթեթությունները վերաբերում են ալպյան բարձրություններում դաշտաբուծության և հացահատիկային մշակույթին, բարձրություններ, վորոնք համար են 5, 6 և ուշադիմումը $\frac{1}{2}$ հազար գոտնաչափի, ինչպես, որինակ՝ Սևանա լճի ափերը և ուրիշ տեղեր:

Այստեղ հացահատիկային ցանքսերը յենթակա յեն ամեն տեսակի տարերային արհավիրքների՝ ցրտահարության, կարկտահարության, յերաշտի, դաշտային մկների և հազար ու մի այլ փորձանքների: Մեր հիմնական ուղղությունը թելագրում ե մեզ այդ շրջաններում անասնապահությունը զարգացնելու անհրաժեշտությունը: Շատ պարզ ե, վոր մատնանշած ուղղությամբ ձեռք առնելիք միջոցների հետ զուգընթացաբար այստեղ հարկ կլինի գյուղացիությանը հասցնել այն համոզման, վոր պետք ե հրաժարվել գյուղատնտեսական նման անհեթեթություններից: Կան գյուղատնտեսական կյանքի ուրիշ անհեթեթություններ ևս, վորոնց վրա յես յերկար կանգ չեմ առնիլ: Մեզ անհրաժեշտ ե մեր գյուղական տնտեսությունը ռացիոնալիզացիայի յենթարկել, բայց դրա համար պահանջվում են նախնական վորոշ պայմաններ, վորոնցից առաջինն ու հիմնականը հանդիսանում ե շրջանացումը (районирование): Դժբախտաբար պետք ե ասել, վոր մենք նոր ենք միայն ձեռնարկել

այդ աշխատանքին և այդ բնագավառում դեռ շատ բան ունենք
անելու: Պետք ե խստովանվել, վոր մենք այդ աշխատանքի
վրա բավարար չափով չենք ծանրացել՝ մասնագետների վորո՞շ
կադր չունենալու պատճառով: Բայց, համենայն դեպս, յենք
այս տարի հիմնական աշխատանքը կանենք, վորպեսզի վերջնա-
կանապես ստուգենք և յերեան հանենք մեր շրջանացման մեջ
ուղղահայաց գոտիների այն կոպիտ ձեւ, վորի համեմատ
մինչև այժմ Հայաստանը բաժանվել է յերեք գոտիների՝ դաշ-
տային, մերձ-լեռնային և լեռնային, նայած կլիմայական, հո-
ղային և տեղագրական պայմաններին: Այդ շրջանացումը, այժմ-
յան պայմաններում, մեր գյուղատնտեսության հետագա զար-
դացումը նկատի առնելով, մեզ բավարարել չի կարող: Մենք պետք
ե ավելի մոտիկից և տվելի ճիշտ ճանաչենք պայմանների բոլոր
բազմազնությունները, վորպեսզի նրանց դնենք վորոշ շրջա-
նակների մեջ, վորպեսզի կարողանանք ավելի կոնկրետ գաղա-
փար կազմել մեր գյուղական տնտեսության մեջ տեղի ունե-
ցող պրոցեսների մասին:

Որինակ՝ յերբ մենք սկսենք խմբավորել մեր գյուղական
տնտեսությունն ըստ ցանքսերի, ապա ցանքս չունեցողների
թվի մեջ կհայտնվեն մեր դաշտային շրջանների այգեգործնե-
րը, վորոնց, ուրեմն, պետք ե հաշվել բնակչության ամենաաշ-
քատների մեջ. բացի այդ, նույն այդ խմբի մեջ են նաև Յե-
րևանի ու Եղմիածնի այգեգործները, վորոնցից ամեն մեկը
միքանի գետիատին հող ունի, և վորոնց պետք եր իրավամբ
տանել միջակներից բարձրերի և ունեորների մեջ:

Հայաստանում լծկան չունեցող տնտեսությունները մոտ
54% են, բայց այստեղ մանում են նաև մեր խոշոր այգեգործնե-
րի կուլտուրական տնտեսությունները: Ակներեւ ե, ընկերներ,
վոր այդ պարագոքսից մենք չենք ազատիլ այնքան ժամանակ
քանի դեռ չենք անցկացրել մեր տնտեսական շրջանացումը
և քանի դեռ չենք կարողացել մոտենալ այն պրոցեսներին, վոր
տեղի յեն ունենում մեր գյուղատնտեսության մեջ:

Մեր անտեսության ուղղիոնալիզացիայի և ինտենսիֆիկացիա-
յի յերկրորդ մոմենտը հանդիսանում ե մեր անտեսության այն

ընդհանուր վերելքը, վորին առանձին համառությամբ աշխա-
տում ե համենել մեր Հողմողկոմատը: Այդ բնագավառում մեր
բոնած գիծը մեր բյուջեյում հաստատվել է վորոշ ձեւակեր-
պումներով և յեզրակացություններով: Մենք հաշվել ենք, վոր
Հողմողկոմատի պետական բյուջեյի մասնակցության բաժինն
այս տարի պետք ե շատ ավելի լինի, քանի այդ յեղել ե
մինչև այժմ: Անցյալ տարիներում Հողմողկոմատը մյուս ժող-
կոմատներից այդ տեսակետից յետ ե մնացել, նույնիսկ Առժող-
կոմատից, չհիշատակած դեռ կուսադղկոմատը: Այս տարի մենք
վորոշել ենք այդ գործի համար բաց թողնել մի վորոշ գումար,
վորպեսզի բարձրացնենք կուլտուրական ազգեցության, ագրո-
ոգնության և ագրոպրոպագանդայի մակարդակը գյուղում: Այս-
տեղ հիմնական խնդիրը, ընկերներ, բնակչությանը գյուղա-
տնտեսական ոգնություն հասցնելն ե. այս բնագավառում գրլ-
իավոր աշխատավորը շրջանային գյուղատնտեսն ե, վորին մենք
պետք ե մոտեցնենք մեր ագրոկուլտուրական խնդիրներին:

Գյուղի իսկական վերելքը կսկսվի այն չափով միայն, ինչ
չափով մենք շրջանում կունենանք իրոք հավատարիմ խորհր-
դային գյուղատնտես, վորը կհասկանա և մոտիկից կուսումնա-
սիրի գյուղացիների գյուղական տնտեսությունը, և ինչ չափով
վոր այդ գյուղատնտեսը կկարողանա անցկացնել բնակալելու
(гнездование) գյուղական փորձագաշտեր հիմնելու այն մաս-
սայական քաղաքականությունը, վորն այդ բնագավառում կազ-
մում ե մեր աշխատանքի հիմքը: Այդ տեսակետից Հողմող-
կոմատն իր ծրագրում նախատեսել ե շրջանային մասշտաբով
ախատողների և հրանագիչների բավարար կադր: Այս տարի
գավառական գյուղատնտեսների հետ միասին ընդհանուր թիվը
պետք ե 61.ի հասնի:

Թույլ տվեք որանով վերջացնել գյուղատնտեսական ող-
նության խնդիրը և անցնել մեր տնտեսության հետագա զար-
գացման ամենահիմնական հարցին՝ այն հիմնական ուղիին, վո-
րով ապագային պետք ե ընթանա մեր գյուղատնտեսության
վերելքը: Այդ՝ կոոպերացիայի ճանապարհն ե:

Գյուղատնտեսական կոոպերացիան Հայաստանում բոլորու-

վին նոր յերեսույթ ե: Նա ամբողջովին և միանգամայն խոր-
հըրդային ծագում ունի: Պատերազմից առաջ կոռպերացիան
իբրև մասսայական յերեսույթ, մեզ մոտ գոյություն չի ունե-
ցել, չի յեղել նույնիսկ մասնակի գյուղատնտեսական կոռպե-
րացիա: Միքանի արտելներ յեղել են վարանցովի շրջանում և
միքանի ուրիշ տեղերում, բայց գյուղատնտեսական կոռպերա-
ցիան վորպեսզի դառնար մասսայական յերեսույթ, այնպես, ինչ-
պես և ներկայումս, չի յեղել, ինարկե: Միայն մեր որերում,
շնորհիվ մեր քաղաքականության, գյուղատնտեսական կոռպե-
րացիան ամուր և հաստատուն ե և կազմում ե թե խորհըր-
դային իշխանության տեղական որդանների և թե գյու-
ղացիական լայն մասսաների ուշադրության կենտրոնը:
Գյուղատնտեսական կոռպերացիայի աճումը մեզ մոտ պարզ
կարելի յե տեսնել հետևյալ թվերից. յեթե 1924 թվի հունվա-
րի 1-ին մենք ունեինք ընդամենը 13 կոռպերատիվ, ապա
1925 թվի հոկտեմբերի 1-ին, գրեթե յերկու տարուց հետո,
մենք ունենք 47 միավոր, վորոնք ընդգրկում են 20 հազար
գյուղացիական տնտեսություն, կամ չայաստանի ամբողջ գյու-
ղական տնտեսությունների $12,75^{\circ}/\text{o}$ ը: Դրանց աճումը կո-
ռպերատիվ միությունների համեմատությամբ կազմում է
ավելի քան հազար տոկոս. դեպի տնտեսական կոռպերացիան
գրաված գյուղական տնտեսությունների համեմատությամբ,
գրավման կոռփիցինտը հավասար է 13,8-ի:

Ինչպես տեսնում եք այս թվերից, կոռպերացիան կան-
գնել ե մասսայական որդան դառնալու ճանապարհի վրա: Պետք
ե ասել, վոր գյուղացիության մեջ նկատելի յե վորոշ թերում.
Նկատելի յե ձգտում դեպի գյուղատնտեսական կոռպերացիան,
ձգտում ընդառաջ գնալու խորհրդային իշխանությանն ու կո-
ռպերատիվ կենտրոններին:

Բաժանելով ըստ տիպերի, մենք տեսնում ենք, վոր բո-
լոր կոռպերացիաների մեջ ամենաառաջին տեղը բոնում են
պահպաժականը և յուղագործականը, ապա տնտեսագրա-
կայինը և հետո՝ խառը կոռպերացիան:

Կոռպերացիան բավարար չափով սեփական միջոցներ չունի.

բավարար չեն շրջանառության կապիտալներն ու հիմնական
փայտագնարները. սակայն նրանց աճումն այս վերջին յերկու
տարվա ընթացքում հաշվվում է հարյուր հազարավոր տոկոս-
ներով:

Յես թվեր չեմ բերում, բայց անհրաժեշտ եմ համարում
մի յերկու խոսքով կանգ առնել այն բանի վրա, թե գյուղա-
կան տնտեսությունների և առնասարակ գյուղացիության վճր
խավերն են գրաված այդ կոռպերացիայի մեջ:

Յես վերջնում եմ ամենաուժեղ կոռպերատիվ ցանցը՝
պանրագործականը: Այդ կոռպերացիայի սոցիալական կազմի
անալիզը և ուսումնասիրությունը 34 արտելի և 1672 տնտե-
սության վերաբերմամբ, նայած թե անդամները կթի կովերով
ինչպես են ապահովված, ցույց ե տալիս, վոր մեկ կով ունեցող
տնտեսությունները կազմում են $28^{\circ}/\text{o}$, յերկու՝ $25,63^{\circ}/\text{o}$, յերեք՝
 $15,94^{\circ}/\text{o}$, չորս՝ $9,88^{\circ}/\text{o}$, հինգ՝ $5,32^{\circ}/\text{o}$, վեց և ավելի՝ $13,92^{\circ}/\text{o}$
և, վերջապես, կով չունեցող՝ $1,31^{\circ}/\text{o}$:

Ինչպես տեսնում եք, հիմնական մասսան կազմում են մեկ,
յերկու և յերեք կով ունեցողները: Ինարկե, դրանք այնպիսի
տնտեսություններ են, վորոնց վոչ մի դեպքում չի կարելի
հաշվել վոչ հարուստ, վոչ կուլակային: Նրանց մեջ կա հա-
րուստների և կուլակների մի խմբակ, վորը վորոշակի կերպով
իր ազդեցությունն աշխատում է տարածել ամբողջ պանրա-
գործական և կաթնատնտեսական արտելի վրա:

Եթե վերջնենք գյուղատնտեսական վարկային կոռպե-
րացիան, ապա կպարզվի, վոր 100 տնտեսությունից 52-ը յեզ
և գոմեց չունի: Մի գլուխ անասուն ունի $12,85^{\circ}/\text{o}$ -ը, յերկու
գլուխ՝ $24,34^{\circ}/\text{o}$ -ը, յերեք գլուխ՝ $3,48^{\circ}/\text{o}$ -ը, չորս և ավելի՝
 $6,95^{\circ}/\text{o}$ -ը: Հետազոտումը վերաբերում է 16 վարկային ընկե-
րությունների 4480 տնտեսություններին, և վորպես տնտեսու-
թյան ապահովության հիմնական չափանից վերցրված ե լծկանը:

Դուք տեսնում եք, վոր այստեղ ճնշող մեծամասնությունը
բնակչության միջակ և չքափոր խավերն են, և վոր քիչ շատ
հարուստ տարրերը համեմատաբար թույլ կերպով են ներկա-
յացված:

Այդիների տարածության տեսակետից, մինչև կես դեսիա-
տին այգի ունեցողները կազմում են $40,34^{\circ}$, կեսից մինչև
մեկ դեսիատին՝ $40,08^{\circ}$, մեկից մինչև յերկու՝ $15,82^{\circ}$, յեր-
կուսից ավելի՝ $3,16^{\circ}$: Այստեղ հետազոտման են յենթարկված
9 ընկերությունից 7-ը՝ 771 տնտեսությամբ:

Նույն բանն ե ցույց տալիս նաև այգեգործների կոռուպ-
րացիայի թվերի վերլուծումը:

Գյուղատնտեսական կոռուպերացիայի դերը մեզ մոտ վեր-
ջին տարիներում վորոշակի կերպով մեծացել ե, և վոչ այն-
քան մեր արտադրության բնագավառում, ինչքան մեր ըրջանա-
ռության. բայց այդ մասին յես հետո կխոսեմ: Համենայն դե-
պլս, գյուղատնտեսության մեջ կոռուպերացիան հսկայական
աշխատանք ե կատարում անմիջական արտադրության կազմա-
կերպման գործում, հատկապես՝ գյուղական տնտեսության ար-
դյունքների վերամշակման բնագավառում, ինչպես, որինակ՝ գի-
նեգործության մեջ, պանրագործական և յուղագործական գոր-
ծարաններում: ավելի ևս մեծ ե այդ աշխատանքը վորոշ կո-
միսիոն և կամ ուրիշ առևտրա-վաճառականական հիմունքնե-
րով կատարվող գործառնությունների մեջ: Այս վերջինը հան-
դիսանում ե կոռուպերացիայի վատառողջ թեքումը, վոր մենք
հույս ունենք արագ կերպով և հիմնականորեն արմատա-
խիլ անել:

Հետևյալ մոմենտն, ընկերներ, մեր վարկային գյուղա-
տնտեսական կոռուպերացիան ե: Նա կարողացել է 1923—1924
թվին մտցնել և շրջել տալ գյուղական տնտեսության մեջ
 $1.628.000$ ռուբլու մի կոր գումար, իսկ 1924—1925 թվին
 $2.975.000$ ռուբլի, այսինքն համարյա յերեք միլիոն ռուբլի:
Մեր գյուղատնտեսական վարկի սիստեմով գյուղական տնտե-
սության մեջ մուծվող շրջանառության գումարների աճումը
միայն մի տարվա ընթացքում մեծացել ե մոտ յերկու անգամ:

Ի՞նչպիսի նպատակների յեն ծառայում և ի՞նչպես են
բաշխվում այդ վարկերը:

1923/24 թվի համեմատությամբ այժմ կա այդ միջոց-
ների վորոշ խմբավորում, և յեթե 1923 թվին գյուղատնտե-

սական բանկի քաղաքականությունը կենտրոնանում եր գլխա-
վորապես արտադրության վաճառահանման պրոցեսսների գրա-
մագորման վրա, ապա 1924/25 թվին, վարկավորման նպատակի
ծանրության կենտրոնը դառնում ե գյուղական տնտեսությանը
և գյուղատնտեսական արդյունաբերությանը արտադրության
միջոցներ հայթայթելը:

Փոխատվության ժամկետի հարցի վերաբերյալ գյուղատըն-
տեսական վարկի քաղաքականությունը վորոշ եվոլյուցիա յե-
ապրել: 1923 թվին միջոցների մեծ մասը բաշխված ե կար-
ճատե վարկով, իսկ 1924-25 թվերին, այդ միջոցների կե-
սից ավելին բաց ե թողնված յերկարատե վարկով: Վարկային
ժնկերությունների ցանցը բավարար չափով տարածված չե:
Ահա այն աղյուսակը, վոր ցույց ե տալիս վարկային ընկե-
րությունների ստորին ցանցի աճումը՝ սկսած 1923 թվի ապ-
րիլի մեկից, այսինքն՝ չայաստանի Գյուղատնտեսական Բանկի
հիմնադրման որից:

Մի վարկային ընկե-
րության անդամների
միջին թիվը.

¹/IV 1924 թ. 6 վարկ. ընկերութ. 3725 մարդ . 546

¹/IV 1925 թ. 19 7056 մ. . . . 371

¹/IX 1925 թ. 28 11.040 մ. . . . 391

Այդ բնագավառում գյուղատնտեսական վարկի ամենա-
հիմնական խնդիրը ներկայումս նրանում ե, վոր ընդունակվի
գյուղատնտեսական վարկային ընկերությունների ցանցը: Մեզ
մոտ այժմ կա միայն 31 ընկերություն: Միքանի շրջաննե-
րում նրանք կարողացել են ավել կամ պակաս չափով ամբողջ
շրջանի տնտեսական կյանքն ընդգրկել՝ համապատասխան այն
միջոցների, վոր նրանք ունեցել են իրենց տրամադրության
տակ: Այդ ցանցի հետագա գարգացումը կազմում է
գոյություն ունեցող և նոր հիմքով վարկային ընկերություն-
ների ամրապնդման զլիսավոր խնդիրներից մեկը. ուղիղ քա-
ղաքականությունն ու անսխալ ղեկավարությունը հանդիսա-
նում են Գյուղատնտեսական Բանկի և գյուղատնտեսական
կոռուպերացիայի կենտրոնի ամենաառաջին հիմնական պարտա-

կանությունը։ Գյուղատնտեսական վարկի բնագավառում հաջորդ ամենակարևոր հարցը հանդիսանում է գյուղացիական խնայողությունները գյուղատնտեսական ընկերությունների մեջ գրավելու խնդիրը։

Մենք կարծում ենք, վոր վարկային ընկերություններն ու գյուղատնտեսական վարկի ամբողջ սիստեմը, մեր գյուղատնտեսությանն իրական ոգնություն կարող են հասցնել միայն այն դեպքում, յերբ նրանք պետությունից ստացվող ոգնության հետ միասին կկարողանան գրավել անհամեմատ ավելի մեծ քանակություն այն միջոցներից, վոր կուտակվում են գյուղական տնտեսություններում։ Գյուղական խնայողությունների ոգտագործումը հանդիսանում է այդ բնագավառում աշխատանքը ծավալելու և գյուղատնտեսության սիստեմում վարկերը խոշորացնելու ամենակարենը խնդիրն ու հիմնական պայմանը։ Ինքնին հասկանալի յե, վոր այստեղ պետությունը և թե տեղական որդանների և թե Անդրկովկասյան ֆեդերացիայի կենտրոնական որդանների միջոցով, պետք ե լրաի իր բոլոր ուժերը, վորպեսզի գյուղատնտեսական վարկի այդ սիստեմի մեջ մտցնի բավարար քանակով միջոցներ և հնարավորություն տա վերջնիս կատարելու իր կոչումը։ Նա պետք ե ոգնի աղքատ տնտեսություններին և գյուղատնտեսական վարկի այդ սիստեմի մեջ ստեղծի վորոշ ֆոնդ։ Բայց ինձ թվում ե, վոր արդեն ժամանակն է գյուղացիական խնայողությունները գյուղատնտեսական վարկի և գյուղատնտեսական կոռպերացիայի սիստեմների մեջ կուտակելու կամ համակենտրոնացնելու հարցը համարել մեր հիմնական խնդիրը։ Հատկապես նկատի ունենալով այն ինֆլյացիան, վորն այս տարի նկատելի յե մեր գյուղում գյուղատնտեսական հարկի թեթև ու աննշան լինելու հետեւանքով։

Յերրորդ խոշոր խնդիրը գյուղատնտեսական վարկի բնագավառում հանդիսանում է մեր աշխատանքի մշակված, ծրագրային լինելը, վորի կարիքը հատկապես ավելի յե զգութ գյուղատնտեսական վարկի սիստեմը։ Մենք այդ բնագավառում ջանքեր ենք թափում, սկզբան, յեռանդուն, ինքնակամ

ջանքեր, վորպեսզի նախապես մշակենք այնպիսի մի ծրագիր, վոր հնարավոր կլինի համապատասխան ձեռվ իկատար ածել և վոր կատարելապես կհամապատասխանի իրականությանն ու գյուղացիության իրական կարիքներին։ Բայց մենք պետք ե խոստովանվենք, վոր մեզ չի հաջողվում իրականացնել այդ միշտ և ամենուրեք. միշտ չենք կարողանում նախատեսել գյուղատնտեսության իրական պահանջները, նրա այս կամ այն տեսակի վարկի կարիքը և ծրագրի իրականացման ընթացքում մենք վարկերը փոխադրում ենք նպատակացին մի հատկացումից դեպի մի ուրիշը։

Այսպես ե մեր գյուղատնտեսական վարկի՝ գյուղատնտեսության վրա ազդող գործիքի գրությունը, գործիք, վորը կարող ե նպաստել մեր գյուղի տնտեսական վերելքին։ Բայց միենույն ժամանակ, սխալ քաղաքականության դեպքում, կարելի յե գյուղատնտեսությանը հսկայական վնաս հասցնել։ Մենք պետք ե այդ բնագավառում հարյուր տոկոսով ապահոված լինենք ամեն տեսակի սխալներից, դեպի ուր և ուղղված են խորհրդային կառավարության և գյուղատնտեսական կոռպերացիայի գլխավոր ջանքերը։ Վորպեսզի վարկի հարցն առհասարակ սպառենք, պետք ե ասել, վոր մեր բոլոր առետրական և տնտեսական հիմնարկությունները ծայրահեղ լարվածություն են ապրում։ Մեր յերկում շրջանառության մեջ դրված վարկային միջոցներն անբավարար են, և անհրաժեշտ ե թե մեր գյուղատնտեսական վարկի սիստեմի մեջ նոր միջոցներ մտցնել և թե ուժեղացնել մեր առետրի ու արդյունաբերության վարկավորումը։ Արդեն այն փաստը միայն, վոր Առետրա-Արդյունաբերական Բանկը մինչեւ հիմա կարելիություն չի գտել մեզ մոտ, Յերեանում իր բաժանմունքը բաց անելու, և վոր մեր առետրուն ու արդյունաբերությունն առանձնապես շեն վարկավորվում, — դա ցույց ե տալիս, վոր մեր հիմնարկները, մեր բարձր որդանները, պետք ե հարկավոր ուշադրությունը գարձնեն մատնանշված դրության վրա։ Ճիշտ ե, տնտեսության մեջ վորոշ չափով միջոցներ մտցրվում են, և նրանց աճումը յերեք անգամ ավելի յե 1924 և 1925 թվերի համեմա-

տությամբ, բայց այդ աճումն անբավարար ե վարկավորելու մեր արդյունաբերությունը, առևտուրն ու կոռպերացիան:

Կոռպերացիայի յերրորդ ձևը՝ տնայնագործական—արհեստանոցային կոռպերացիան ե, վորը մեզ մոտ միանգամայն անուշադրության ե մատնված. հասարակական կազմակերպությունները բավարար չափով շահագրգուված չեն այդ կոռպերացիայով. հենց կոռպերացիան ինքն ել, կարծես թե, աչքաթող ե արեւ այդ մասը: Համենայն դեպս, մեր կոռպերատիվ որգանները քիչ ուշադրություն են դարձնում տնայնագործական—արհեստանոցային կոռպերացիայի վրա. խորհրդային իշխանությունը նույնպես բավարար պաշտպանություն չի ցույց տալիս. կուսակցական որգաններն ել իրենց հերթին այդ գործի ղեկավարությամբ քիչ են զբաղվում: Մենք գիտակցում ենք, վոր ընդհանրապես տնայնագործական—արհեստանոցային կոռպերացիան, վորը պետք ե խոշոր դեր խաղար մեզ մոտ նկատվող հողային գերաբնակչության և կողմնակի արհեստների տեսակետից, չե իրագործում անգամ ամենափոքրիկ մասն այն խնդիրների, վոր պետք ե իրագործեր:

Ինչ վերաբերում ե սպառողական կոռպերացիային՝ յետ պետք ե զիմեմ այն դիագրամաներին, վորոնք այստեղ ցուցադրված են, և նրանց վրա հիմնվելով պետք ե անեմ ընդհանուր յեզրակացություններ: Ընդհանուր ձևով բնութագրելով մեր սպառողական կոռպերացիան, պետք ե ասել, վոր նա աճում է, և նրա ստորին ցանցը տարածվում ե միանգամայն առողջ կերպով: Սպառողական կոռպերացիան մեր գյուղատնտեսության կենտրոնն ե: Նա բավարար չափով ղեկավարում ե վերջինիս՝ վորոշ տեղերում ունենալով կատարյալ հաջողություն, մի շարք տեղերում գուցե վոչ այնքան, բայց և այնպես ղեղավարությունը ուղիղ ե:

Թույլ տվեք սպառողական կոռպերացիայի մասնակցության վրա կանգ առնել այն ժամանակ, յերբ յես սկսեմ խոսել շրջանառությունների և առևտրի մասին:

Մեր գյուղական տնտեսության զարգացման հետևյալ հիմական մոմենտը մենք համարում ենք նրա ինդուստրալիզա-

ցիան: Մենք կարծում ենք, վոր գյուղատնտեսությունը վերջիվերջո պետք ե դուրս հանել այն նախնական սպառողական բնույթից, վորը նա ունի հատկապես մեր հեռավոր գավառներում. և յերկրորդ, պետք ե գոհացուցիչ կերպով դնել գյուղատնտեսական հում մթերքների կոռպերատիվ վերամշակման հարցը: Այս հարցը մեզ մոտ դրված ե յերկու կողմերից, դաշտային շրջաններում գինեգործների մեջ, վորտեղ անհրաժեշտ ե գինու կոռպերատիվ վերամշակումը, և ավելի սուր կերպով՝ զանազան պտուղներից կոնսերվատ պատրաստելու գործում: Ալպյան շրջաններում, մի տարվա ընթացքում մեզ հաջողվել ե արդեն կահավորել 11 պանրագործարան: Մենք դրանց վրա նայում ենք իրեն այնպիսի կենտրոնների, վորոնց շուրջը պետք ե բյուրեղանան թե պանրագործական և թե յուղագործական արտելները. գյուղատնտեսության բարձրացումը և նրա ուղղունալիզացիան մեծապես կապված պիտի լինեն այդ կենտրոնների հետ:

Մենք այդ պանրագործարաններին և յուղագործարաններին, վորոնք տեխնիկորեն կահավորված են միանգամայն գոհացուցիչ կերպով, տալիս ենք խոշոր նշանակություն՝ մեր ալպյան բարձրություններում տնտեսության գործն ուղիղ դնելու և աստիճանական զարգացման յենթարկելու տնտեսկետից: Անհրաժեշտ ե համոզել գյուղացուն, վոր հրաժարվի միանգամայն անձեռնտու, անոգուտ հողագործությունից և իր ամբողջ տնտեսությունը հարմարեցնի ալպյան բարձր-կուլտուրական կաթնատնտեսությանը: Սրանումն ե հիմնական նպատակն ու խնդիրն այն տասնմեկ յուղագործարանների, վոր ներկայումս շինված պատրաստ են և յեկող տարվանից պետք ե սկսեն աշխատել:

Թե ինչպիսի վերամշակման ենք յենթարկում մենք գյուղական տնտեսության մյուս արդյունքը՝ բամբակը, այդ մասին յես կխոսեմ այն ժամանակ, յերբ կանցնեմ արդյունաբերությանը:

Վերջին ամենախոշոր հարցը, մեր տնտեսության զարգացման ամենակարևոր ուղին, վոռոգումն եւ և դրա հետ

սերտ կապված ամբողջ մեր յերկրի, մասնավորապես մեր գյուղատնտեսության ելեկտրիֆիկացիան:

Այս բնագավառում, ընկերներ, մեր առաջ գտնվում են հսկայական խնդիրներ: Սակայն այստեղ պետք ե վորոշապես նըշվի, վոր մենք վոչ միայն պիտի լուծենք այդ խնդիրներն, այլ և մենք պետք ե պլանային զարգացման բավական արագ տեմպ վերցնենք վոռոգման մեր աշխատանքներում և առանձնապես ելեկտրիֆիկացիայի մեջ:

Մեր ուսեցած ջրային միջոցները բավարար են, բայց նրանք մինչև որս շատ քիչ են ոգտագործվում ու շահագործվում մեր գյուղատնտեսության միջոցով, իսկ ելեկտրիֆիկացիայի նպատակով նրանք ցարդ բոլորովին չեն ոգտագործված: Մինչդեռ, մեր ջրային միջոցների միայն տեսական ուժը (теоретическая мощность) հավասարվում է 500.000 ձիու ուժի: Յեթե մեզ հաջողվեր ոգտագործել մեր բոլոր գետերի և ջրային սիստեմի ամբողջ եներգիան, ապա մենք կկարողանայինք չայստանում, այդ փոքրիկ յերկրում ստեղծել 500.000 ձիու ուժ ներկայացնող ելեկտրիֆիկացիա: Մյուս կողմից, յեթե մեզ հաջողվեր ոգտագործել մեր ջրային միջոցները վոռոգման նպատակներով, ապա հնարավոր կլիներ բոլոր մեր այժմյան ամայի հողերը՝ 150.000 դեսիմտին տարածությամբ, ամբողջովին վոռոգել:

Սևանա լճի ավագանի հսկայական ջրերը հարկավոր չափով չեն ոգտագործվում դաշտավայրերի հողերի վոռոգման համար: Բոլորովին չեն ոգտագործվում, այսպես կոչված սելաֆային ջրերը, վոր մեր ջրային միջոցների սիստեմի մեջ կազմում են հսկայական հարստություններ: Մենք այդ սելաֆային ջրերի վերաբերյալ ցուցաբերում ենք այն հետաքրքրությունը, վորը գյուղացին կոչում ե՝ հետաքրքրություն դեպի հերքան ձյունը. և իրոք, այդ բոլոր ջրերի աղբյուրը կազմում է նախորդ տարվա ձյունը, մինչդեռ բնակչության անտարբեր վերաբերմունքը գեղի մեր ջրային միջոցների այդ մասը, մեզ վրա շատ թանգ է նստում: Ամեն տարի հայաստանի լեռնագագաթներից բոլորովին իրուր, բոլորովին ապարդյուն, միայն Արաքս գետը հո-

սում ե հարյուր միլիոն խորանարդ սաժեն ջուր, վորին այնքան կարոտ ե հատկապես մեր դաշտային շրջանների գյուղացիությունը: Այստեղից ել հենց տարերային կերպով բղխում են խոշոր ջրամբարներ կառուցելու ծրագիրները, ինչպես Զամբըլվինը—9 միլիոն քառակուսի սաժեն, կամ Արփաչայինը՝ 7 միլիոն սաժեն պարունակությամբ: Այս բոլոր ծրագիրները բավական ցայտուն կերպով ցույց են տալիս, թե սելաֆի ջրերը վճր աստիճան մեր ուշագրության կենտրոնը պետք ե դառնան: Յես կարծում եմ, վոր այդ սելաֆաջրերը կարող են վոռոգել տասնյակ հազարավոր դեսիմտին հողեր, այդ պատճառով ել անհրաժեշտ և ընդհուպ մոտենալ այդ ջրերի աղբյուրներին:

Ջրաբաշխության տեսակետից նույնպես մենք խոշոր գործ ենք կատարել, բացված են՝ Շիրակի ջրանցքը, վարով մենք պարձենում ենք, և Եջմիածնինը, վոր տասնյակ տարիների ընթացքում վոչ ցարական, վոչ ել դաշնակների կառավարությունները չկարողացան ավարտել:

Չնայած այն հանգամանքին, վոր այդ բնագավառում խոր աշխատանքներ կատարված են, այնուամենանիվ դրանք բոլորը կազմում են չնչին մասը այն աշխատանքների, վորը մենք դեռ պիտի կատարենք:

Հնդամյա աշխատանքի ծրագիր արդեն կազմված է: Այս աշխատանքները, վորը մենք պետք ե կատարենք այս տարի, բավական սեծ են և ընդարձակվ Դրանց բնութագրման համար պետք ե հիշել, վոր այս տարվա բոլոր մեր ջրաբաշխական աշխատանքների համար մենք մեր բյուջեյում և բանկային վարկի կարգով ունենք յերկու միլիոն ոռություն ավելի միջոց:

Այս տարի մենք պետք ե անցկացնենք Փոքր Սարգարաբաղի ջրանցքը և վերականգնենք Արագդայանինը, պետք ե հողերի վոռոգման համար մեքենայական ձեռվ ջուր բարձրացընենք և գրանից դուրս նաև մի շարք ուրիշ ծրագիրներ իրագործենք: Այս աշխատանքները պետք ե վերջացնել:

Բացի այս, խոշոր խնդիր ե մեզ համար նաև ջրոգտագործման և ջրմատակարարման գործը կանոնավորելը: Ջրոգտագործման գործի կարգավորելը մեզ համար հանդիսանում է խո-

շոր քաղաքական խնդիր։ Զբերի սակավությունը մեզ մոտ պահած չափով չի ծանրանում գյուղացիության վրա, քան սակավահողությունը։ Յեթե հարցն այսպես դնենք. ի՞նչից ե ավելի նեղվում մեր գյուղացիությունը դաշտային շրջաններում, սակավահողությունից, թե սակավաջրությունից, ապա պետք ե պատասխանենք, վոր գյուղացիությունը ավելի շատ նեղվում ե սակավաջրությունից, քանի վոր ջրոգտագործման ձեռք բոլորովին չի կանոնավորված։ Նա հաստատված ե պարսկական խանության ժամանակվանից և փոփոխության չի յենթարկված վոչ ցարական, վոչ ել դաշնակների կառավարության ձեռքով։ Մենք այդ խնդիրը դնում ենք միայն. սերտորեն մոտենալ նրան դեռ չենք կարողացել։ Մենք դեռ մտածում ենք մշակել ջրոգտագործման ուղիղ, նպատակահարմար ձեւ։

Յես ասում եմ, ընկերներ, վոր հանցագործություն կլիներ, յեթե մենք ջրաբաշխության խնդիրն առաջ քաշելով՝ նրա հետ զուգընթացաբար չդնեյինք ելեկտրիֆիկացիայի խնդիրը։ Մեզ մոտ բոլոր ջրաբաշխական աշխատանքները կապված չեն ելեկտրիֆիկացիայի հետ։ Մենք ծրագրում ենք այդ աշխատանքներն ոգտագործել նաև ելեկտրիֆիկացիայի համար։ Որինակ, Շիրակի ջրանցքը, վոր պիտի վորովի 4,000 դեսիմատին, պիտի ծառայի նաև խոշոր հիդրո-ելեկտրական կայարաններին, վորոնք կառուցվելու յեն ջրանցքի սկզբեց յերեք վերստի վրա, վորտեղ ջուրը 115 մետրից ե թափվում։ Իրականացնում ենք նաև մանր ելեկտրիֆիկացիա։ Դուք հնարավորություն կունենաք, յեթե վոչ այսոր, գոնե վաղը, տեսնել Յերևանի հիդրո-ելեկտրական կայարանը։ Բացի այս, մենք ունենք նաև մանր ելեկտրիֆիկացիոն բնույթ կրող ձեռնարկություններ։ Ստեփանավագնում և իջևանում։ Արդեն վերջացրված են Ղարաքիլիսայի և Նոր-Բայազետի ելեկտրական կայարանները։

Ահա այն զլխավոր, հիմնական ուղիները, վորոնցով մենք ուղում ենք տանել մեր գյուղատնտեսությունը։ Զրաբաշխական ուղիղ սիստեմը՝ բավականաշափ կապակցված մեր բոլոր ելեկտրիֆիկացիոն ծրագիրների հետ, ներկայումս սկսված գյուղատնտեսության ինդուստրալիզացիան, գյուղական տնտեսու-

թյան կոոպերացումը և նրա հետագա զարգացումը, մեր գյուղական անտեսության վշանացումն ու ոացիոնալիզացիան՝ ինտենսիվիկացիայի հետ, — ահա այն հիմնական, զլխավոր գծերը, վորոնցով ուղում ենք վարել մեր գյուղական տնտեսության հետագա զարգացումը։

Գյուղատնտեսության ապրանքների և նրանց շրջանառության հարցի մասին յես պետք ե հայտարարեմ միքանի թվեր միայն, վոր պետք ե, ինչպես և մեր բոլոր թվերը, ընդունել վորոշ վերապահությամբ և սահմանափակումներով։

Ընկերներ, ինչպես հայտնի յե, գյուղատնտեսության ընդհանուր արդյունքը ներկայումս հաշվվում է 29,000,000 ռուբր, լի, 1923-1924 թվին՝ 27,000,000 ռուբրի, 1925-1926 թվին յեթաղրվում ե՝ 34,000,000 ռուբրի։

Ապրանքային զուտ արդյունքը հաշվվում է 5,575,000 ռուբր։ Այս թիվը ստուգման կարիք ունի և հավասար ե ամբողջ արդյունքի 15,5% ին։

Յերկրի ընդհանուր շրջանառության խնդրում մեզ ամենից շատ հետաքրքրում ե այն հարցը, թե նրանում պետական և կոոպերատիվ հիմնարկությունները մասնակցության ինչ բաժին և մասնավոր առևտուրն ինչ բաժին ունեն։ Այդ տեսակից, մենք ունենք թվեր՝ մշակված ֆինժողկոմատի կողմից, մենք կողմից առևտուրի մասնակտությունների առևտուրի դերն ու մասնակցության բաժինը ընդհանուր շրջանառության մեջ, և մյուս կողմից՝ մասնավոր առևտուրինը։ Մեզ մոտ կան 1924—1925 և 1923 թվերի առաջին կիսամյակների ավանդները։ Տոկոսային տեսակետից, 1923 թվին, մասնավոր առևտուրի մասնակցությունը 67,3% եր, կոոպերատիվ առևտուրինը՝ 8,8%, և պետական առևտուրինը՝ 23,9%։ Ինչպես տեսնում եք, 1923 թվին մեր ընդհանուր շրջանառության մեջ նկատելի յե մասնավոր առևտուրի գերիշումը։ 1925 թվին պատկերը սուր կերպով փոխականացիր առևտուրը յետ ե մզգած վերջին շարքերը։ Վասնավոր առևտուրը յետ ե մզգած վերջին շարքերը և ընդհանուր շրջանառության մեջ նրան բաժին ե ընկնում 25% ընդհանուր շրջանառության մեջ նկատելի յե մասնավոր միայն, կոոպերացիայի մասնակցությունը 8,8% ից հասնում է

մինչև $36,9^{\circ}/_0$, իսկ պետական առեստրինը՝ $23,9^{\circ}/_0$ -ից հասնում են մինչև $38^{\circ}/_0$: Այս վերելքի պատճառն այն է, վոր այն ժամանակ, յերբ մասնավոր առետուրն իր պտույտն այս յերկու տարվա ընթացքում կարողացել են ավելացնել 8 անգամ, կոռպերացիան նույն ժամանակամիջոցում նրան գերազանցելով բացարձակութեն և համեմատական չափով, ավելացել են 84 անգամ, իսկ պետառետուրը՝ 40 անգամ: Թվերի հետագա վերլուծումը ցույց է տալիս, վոր մեծաքանակ առետրի խնդրում մասնավոր առետուրը դուրս է մղված, և նրա բաժինը շրջանառության մեջ կազմում է միայն $3^{\circ}/_0$, մինչդեռ պետառետրինը հասնում է $72^{\circ}/_0$ -ի և կոռպերացիայինը՝ 25 : Մասնավոր մեծաքանակ-հատափածառ առետուրը պտույտի մեջ է մտել և ծաղկում է Յերկանից դուրս, գավառական քաղաքներում: Նա, մասնավոր մեծաքանակ-հատափածառն այստեղ մի քիչ ավելի յեւ: Մասնավորի մասնակցությունը $12,5^{\circ}/_0$ են, պետառետրին ընկնում է $59^{\circ}/_0$, կոռպերացիային՝ $28,5$: Հատափածառ առետրում մասնավոր կապիտալը տիրապետում է առետրական միավորների ամենամեծ մասին: 1949 առետրական միավորներից նրան բաժին է ընկնում 1670 -ը. բայց և այսպես նա կարողացել է կենտրոնացնել շրջանառության միայն $42^{\circ}/_0$ -ը. 238 կոռպերատիվ միավորները կատարում են մանրավակառ արժեքների շրջանառության $50^{\circ}/_0$ -ը, իսկ պետառետուրը մանրավաճառում աննշան մասնակցություն է ցույց տալիս, ընդամենը $8^{\circ}/_0$:

Հատուկ ուշադրության են արժանի բանվորա-գյուղացիական մասսաների ամենախիտ մասում գտնվող մասնավոր և կոռպերատիվ մանրավաճառի ապարատները, շրջանառության ստորին ողակները: Այստեղ մենք տեսնում ենք այսպիսի պատկեր. այն ժամանակ, յերբ պետառետուրն ունի միայն 5 առետրական միավոր, մանրավաճառ կոռպերատիվը ունի 159, մասնավորը՝ 304. այսինքն, մասնավոր առետուրը հատափաճառում յերկու անգամ ավելի առետրական հիմնարկություն ունի, քան կոռպերատիվը: Բայց շրջանառության վերաբերյալ պետք է բոլորովին հակառակը նշել: Ինչքան Ֆինժողկոմին հաջողվել է հաշվառքի յենթարկել գյուղացիության մեջ մասնավոր առետրի

շրջանառությունը, դա արտահայտվում է $26^{\circ}/_0$ -ով, մինչդեռ կոռպերացիային բաժին է ընկնում $65^{\circ}/_0$: Համապատասխան բացարձակ թվերն են՝ $565,7$ հազար ոռություն և $1,443,7$ հազար ոռություն: Բուն Յերկանում կոռպերացիան տիրել է շրջանառության $60^{\circ}/_0$ -ին, իսկ մասնավորը՝ $40^{\circ}/_0$ -ին: Մենք հիմա արձանագրում ենք 1923—1926 թվերի պտույտի աճումը: Հանրապետության մասնավոր դրա միջին աճումը հավասար է $2300^{\circ}/_0$ -ի, այսինքն, 23 անգամի, կոռպերացիայի պտույտի աճումը հավասար է $8400^{\circ}/_0$ -ի, մասնավորինը՝ $800^{\circ}/_0$ -ի, պետառետրինը՝ 4000 -ի: Յերկանում պետական առետուրը մեծացրել է իր պտույտը 93 անգամ, կոռպերատիվ առետուրը՝ 111 անգամ, մասնավոր առետուրը՝ 8 անգամ: Մնացած բաղաքներում է գյուղաքաղաքներում համապատասխան թվերն են՝ $10,57$ և 9 : Մասնավոր առետուրը գերազանցում է պետական—կոռպերատիվ առետուրը իր ցանցի ընդլայնումով: առետրական միավորների $90,3^{\circ}/_0$ -ը պատկանում է մասնավոր առետրին: Պտույտի ապշեցուցիչ աճումը ցույց է տալիս կոռպերացիայի վորոշակի և խոշոր հաջողությունը, հատկապես սպառողական կոռպերացիայի: Թե մեծաքանակ և թե մանրավաճառ առետրում մեր կոռպերացիան մղում է մասնավոր առետրականին հետին շարքերը: Մեծաքանակ—հատափաճառ և հատկապես մանրավաճառ առետրում մեր սպառողական կոռպերացիան հաջողությամբ կատարում է իր հիմնական ֆունկցիաները: Նա ունի բոլոր այն հիմնական արատները, վոր հատուկ են նաև մյուս տեսակի կոռպերացիաներին ամբողջ Միության մեջ. դրանք են՝ կոռպերատիվ ինքնագործունեյության, կոռպերատիվ գեմոկրատիվի և հաշվետվության անբավարար վիճակը: Այս բոլոր ախտերով տառապում է նաև մեր կոռպերացիան:

Հսկայական դեր է խաղում այդ պտույտի մեջ գների տարածումը: Մենք այստեղ վոտ ենք դնում այն բնագավառը, պարը ամենից շատ է հետաքրքրում մեր գյուղացուն, այն բնագարը ամենից շատ էնքնարկության հայտնաբերության, կոռպերատիվ գեմոկրատիվի և հաշվետվության գավառը, վոր մենք ամենից շատ ենք հաշվի առնում առաջմ. գավառը, վոր մենք ամենից շատ ենք հաշվի առնում առաջմ. գավառը, վոր մենք գյուղացիության բարդ բնագավառն է: Այդ իրոք դա գների քաղաքականության բարդ բնագավառն է:

ամենաբարդ բնագավառն՝ ինչպես խորհրդային իշխանության, այնպես և կոռպերատիվ կազմակերպությունների աշխատանքների ժամանակ։ Այստեղ յուրաքանչյուր վրիպումը դառնում է մինուս վոչ միայն մեր կոռպերացիայի, այլ և ամբողջ խորհրդային իշխանության համար. այստեղ փոքրիկ սխալները ցնցում են ամբողջ մեր խորհրդային սիստեմը, յեթե ավելին չասենք. այդ պատճառով մենք պետք են հատկապես մանրակրկիտ վերլուծության յենթարկենք գյուղատնտեսական մթերքների գների տատանումները։ Այդ անալիզը կա թե Յերևան քաղաքի մեծ ինդեքսի և թե համահայաստանան փոքր ինդեքսի վերաբերմամբ։ Հատավաճառ մեծ ինդեքսի գները միշտ տարիներում, հունվարի մեկին Յերևանում հետեւյալ պատկերն ունեն։

	1913 թ.	1924 թ.	1925 թ.	1926 թ.
Հնդհանուր.	100	288	273	282
Գյուղատնտես.	100	159	230	260
Արդյունաբ.	100	365	402	296

Յերևան քաղաքում, 1924 թվի հունվարի մեկին ընդհանուր գործածական մթերքների մանրավաճառ գների ինդեքսը 3 անգամ ավելի յե յեղել, քան խաղաղ ժամանակ, ըստվորում այդ տարածվում եր գլխավորապես արդյունաբերական ապրանքների վրա, վորոնց ինդեքսը հավասարվել է 365-ի, իսկ գյուղատնտեսական մթերքներինը՝ 199-ի։

Հետեւյալ թվին նկատվում է միքիչ հակառակ պատկեր. ընդհանուր ինդեքսն սկսում է սիգիչ պակասել, 1924 թվի 288-ից իջնելով 1925 թվին մինչև 273, այսինքն $5^{\circ}/_0$ նրա հետ զուգընթացաբար իջնում են նաև արդյունաբերական ապրանքների գները 1924 թվի 365-ից 1925 թվին մինչև 302, այսինքն, $17^{\circ}/_0$ միաժամանակ շատ բարձրանում են գյուղատնտեսական ապրանքների գները, վորոնց ինդեքսը 1924 թվի 159-ից 1925 թվին հասնում է 230-ի, այսինքն, համարյա $45^{\circ}/_0$ գյուղատնտեսական մթերքների գների այդ բարձր ինդեքսը 1925 թվի ընթացքում, գարնանից սկսում է իջնել և հոկտեմբերին հասնում է միչև 192-ի, բայց ձմեռային ամիսների սկզբում, այսինքն նոյեմբերին, նորից սկսում է բարձրանալ և 1925

թվի հունվարի մեկին նա հասնում է 260-ի, այսինքն, 1925 թվի հունվարի սահմանից անցնում է $13^{\circ}/_0$ -ով։

1925 թվի ձմուան ընթացքում գյուղատնտեսական մթերքների այսչափ թանգանալն ազդում է ընդհանուր ինդեքսի վրա, վորը 1926 թվի հունվարի մեկին, արդյունաբերական ապրանքների գների շարունակական անկման ժամանակ ($20^{\circ}/_0$ -ով), բարձրանում է $3^{\circ}/_0$ -ով և հասնում է 293-ի։

Հատավաճառ ապրանքների գների տատանման նույն պատկերը, միքիչ ավելի սուր կերպով, նկատելի յե նաև մեր հանրապետության գավառական կենտրոններում։

Հայաստանի հատավաճառ ապրանքների գների փոքր ինդեքսը հունվարի մեկին, 15 տեսակ սթերքների վերաբերյալ (Յերևան, Լենինական, Ղարաբիլիսա, Նոր-Բայազետ, Եջմիածին, Մեղրի, Քեշիշյան և Գորիս) հետեւյալն է.

25 թվի 0° -ային հարա-

	1913 թ.	1924 թ.	1925 թ.	բերութ.	24 թվի հետ
Հնդհանուր	100	293	259	12,	6
Գյուղատնտես.	100	137	209	52,	5
Արդյունաբեր.	100	470	311	33,	8

1925 թվի հունվարի մեկի ընդհանուր ինդեքսը, 1924 թվի համեմատությամբ, խաղաղ ժամանակվա գների հանդեպ նույնական ցածանում է ($12,6^{\circ}/_0$ -ով), բացառապես արդյունաբերապես գների հաշվին, վորոնց ինդեքսը 1925 թվի հունվարի մեկին 1924 թվի հունվարի մեկի համեմատությամբ ընկալվարի մեկին 1924 թվի հունվարի մեկի համեմատությամբ ընկալվարի մեկին 1925 թվի հունվարի մեկի համեմատությամբ ընկալվարի մեկին 1926 թվի բարձրանում է $12,5^{\circ}/_0$ -ով։

Յեղրակացություն.—անցած բյուջետապին տարվա վերջից, գյուղատնտեսական մթերքների գները բարձրանում են, իրենց հետ բարձրացնելով ընդհանուր ինդեքսը. միևնույն ժամանակ բյուջել կերպով իջնում են արդյունաբերական ապրանքների, թույլ կերպով իջնում են առդյունաբերական առարկաների՝ թեյի, շակվավորապես լայն գործածության առարկաների՝ թեյի, շաքարի, լուցկու, աղի և այլն, գները։

Հետեւելով գյուղատնտեսության և արդյունաբերության ինդեքսի տատանումներին, մենք գալիս ենք այն յեզրակացության, վոր նրանք ընդհանուր ինդեքսի համեմատությամբ սեղմը վում են:

Այսպիսով, ընկերներ, մենք տեսնում ենք՝ «մկրատի» բացվածքը, վոր նկատելի յեր մեզ մոտ, ինչպես և ամբողջ Միության մեջ, 1924 թվի ընթացքում շարունակաբար սկսում ե պակասել: Գյուղատնտեսական մթերքների գները մեզ մոտ բարձրանում են, իսկ արդյունաբերական ապրանքների գները՝ իջնում:

Յես կարծում եմ, վոր թե մեծ ինդեքսի և թե փոքր ինդեքսի համեմատ գների այս տատանումները, ինչպես և գոյություն ունեցող պայմանները նկատի ունենալով, գյուղացիները գանգատվելու հիմք չունեն, շուկային վատ դրությունից:

Մեր առևտրի շրջանառության սահմաններում կարևոր դեր է խաղում արդյունաբերական մթերքների կարգավորված մատակարարումը. բայց, արդյունաբերական մթերքներից զատ, նշանակություն ունի նաև հացի կանոնավոր և ժամանակին ներմուծումը:

Մենք, իբրև սպառող հանրապետություն, հացի սլանացին ներմուծումից մեծ կախում ունենք: Հացը մեր շուկայում վոչ միայն հասարակ ապրանք ե, այլ և վերջին հաշվով մի ֆակտոր, վոր վորոշում ե տեղական ծագում ունեցող բոլոր ապրանքների գները: Մեր գյուղատնտեսական բոլոր մթերքների գները կարգավորվում են հացի գնի համեմատ և կախված են Յերեանի շուկայի հացի քանակությունից: Յեթե մեզ մոտ բավարար քանակությամբ հացի պաշար չկա, ապա մենք կարող ենք սպասել բոլոր տեսակի գյուղատնտեսական մթերքների թանգացում: Այդ պետք ե նկատի ունենան մեր այն բոլոր պետական և կոռպերատիվ կազմակերպությունները, վորոնք զբաղվում են մթերումների գործով: Այդ հանգամանքի վրա մեզ մոտ ուշադրություն դարձվում ե: Այն դեպքերում, յերբ պլանային ներմուծումը ժամանակին չի հաջողվել և հացը անբավարար է լցունալու մեջ մենք այդ բացը լցը լցը ենք ար-

տածրագրային ներմուծումներով, մեր սեփական միջոցներով: այսպես, 1924/25 թվին, յեթե այդ արտածրագրային ներմուծումները չլինելին, մենք ուղղակի հացի կրիզիսի առաջ կկանգնելինք:

Մեր կարծիքով, նկատի ունենալով այն բացառիկ կարելիոր նշանակությունը, վոր ունի մեր յերկրի համար հացի կանոնավոր մատակարարումը, մեզ պետք ե թույլ տրվի միութենական շուկաներում ոգտվել յեթե վոչ հիմնական մթերողի, գոնե լրացուցիչ մթերողի իրավունքներով: Առանց դրան մենք չենք պատկերացնում մեր յերկրի բնակչության հետագա կանոնավոր զարգացումն ու մատակարարումը. դրանից դուրս մենք չենք տեսնում ուրիշ միջոցներ ևս, վոր խթան հանդիսանային մեր գյուղական անտեսության հետագա աճման ու զարգացման: Մենք հավատացած ենք, վոր քանի դեռ մեր գյուղացին բավարար չափով չի ապահովված հացով, նաև չի ցանկանալ վոչ դաշտային շրջաններում տեխնիկական կուլտուրաների մշակության անցնել, վոչ ել եռնալին շրջաններում՝ ալպյան անասնապահության ու կաթնատնսեսության: Մենք կարծում ենք, վոր նաև չի զբաղվի բամբակի, ծխախոտի և այլ տեսակի կուլտուրաների մշակության գործով, յեթե նա բավարար չափով հացով ապահովված չե: Մեզ մոտ, բամբակի վերաբերյալ, այդ իրական վտանգը կարծես թե արդեն իսկ նկատելի յե: Հացի մատակարարման տեսակետից, հատկապես բամբակագործական շրջաններում, պետք ե վորոշապես արձանագրել հետեւյալը. ժամանակին հաց չհայթայթելը, վորն այս վերջին յերեք տարիների ընթացքում անընդհատ տեղի յե ունեցել, պարզորոշ կերպով անդրադարձել ե գյուղացիության հոգեբանության վրա բամբակագործության կրծատման ուղղությամբ:

Յես այստեղ պետք ե նախաղգուշացնեմ, թե կարող ե պատահել այդ վտանգը, վորը մեծանում ե արդեն այս վերջին տարիների ընթացքում, իրականություն դառնա յեկող տարի, յերբ վոչ միայն վոռոգման սիստեմի պակասը, այլև հացի կանոնավոր, իր ժամանակին և վորոշված գներով չմատակարա-

ըելն՝ ուղղակի արգելք կհանդիսանան մեր անտեսության զարգացմանը և պատճառ՝ նրա կրծատմանը:

Հացի պլանային ներմուծումն այս տարի իրազործված է $84^0/_{\circ}$ -ով, շաքարինը՝ $61^0/_{\circ}$, մանուֆակտուրայինը՝ $90^0/_{\circ}$: Մեր շուկայում պարզորեն զգացվում ե ապրանքային սով:

Թույլ տվեք, ընկերներ, մի յերկու խոսքով կանգ առնել գյուղական հում նյութերի մթերման խնդրի վրա: Այդ մթերումը հանդիսանում է մեր առևտրական և արդյունաբերական ձեռնարկությունների (Կաշտրեստ, Արարատ) հիմնական աշխատանքը: Այստեղ պետք է նշել այն նոր յերեսութը, վոր նկատելի յե մեզ մոտ ներկայումս. դա մեր հում նյութերի մթերման ասպարիզում, Հայաստանից դուրս գտնված մասնավոր առևտրականի ցուցաբերած մեծ մասնակցությունն ե: Մեր մթերման շուկան բավականաչափ կազմալուծման ե յենթարկվել ինչպես իներցիայով առաջ տարգող սահմանավորված գների քաղաքականությամբ, նույնպես և շնորհիվ այն սխալների, վոր մենք թույլ ենք տվել իր ժամանակին: Այդպիսի սխալներ տեղի յեն ունեցել մասնավորապես խաղողի վերաբերյալ, վորի համար նշանակված ե յեղել մթերման ցածր գին: բացի այդ, միքանի կազմակերպություններ ժամանակին չեն մարզել գյուղացիների հաշիվները, ձգձգել են փող վճարելը և այլն: Վերոհիշյալին պետք ե ավելացնել և անդրկովկասյան և հանրապետական մասշտաբով մթերող որդանների մրցումը: Շուրջան բավականաչափ անկազմակերպ ե դարձել, յես չեմ թագցընում ձեզանից, մենք ստիպված պիտի լինենք բավականին մեծ ջանք թափել, վորպեսզի կարողանանք մտցնել նրան պետական կանոնավորման այն հումը, վոր մեզնից պահանջում է խորհրդային իշխանությունը:

Ընկերներ, վորպես յեզրափակում թույլ տվեք կանդառնել այն հիմնական ինդիրների վրա, վոր կանգնած են մեր առաջ ապրանքային ցըջանառության տեսակետից: Ամենից առաջ պետք ե այդ ցըջանառության հիմնաքարը համարել գյուղացուն հացով ապահովելը՝ իբր խթան արժեքափոր, բարձր տեխնիկական կուլտուրաների մշակության անցնելու,—դաշ-

տային գոտիներում՝ բամբակագործության ու այգեգործության, մերձեռնային գոտիներում՝ ծխախոտագործության ու շերամապահության և լեռնային գոտիներում՝ անասնապահության ու կաթնատնտեսության:

Յերկրորդ խնդիրը յես համարում եմ ապրանքաբաշխ ցանցի զարգացումը. առաջին հերթին, իհարկե, սպառողական կոռպերացիայի տարածումը. հետո մասնավոր գյուղատնտեսական բազարների ու տոնավաճառների հաստատումը: Ապա մենք գտնում ենք, վոր պետք ե կանոնավորապես կազմակերպել գյուղատնտեսական մթերքների և արդյունաբերական հում գյուղերի ավելցուկների գնումների գործը և պայքար մղել մեր հում նյութերի շուկայի անկազմակերպ վիճակի դեմ:

Վերջապես մեր լուծելիք խնդիրների մեջ են մտնում ապրանքային ցըջանառության վարկերի կազմակերպումը, վոր, ինչպես ասացի, պակասավոր ե, Հայաստանի շուկայի տարողության ճշգումը, ոպերացիոն ծրագրների կազմելը և ձկուն, գյուղատնտեսության գարգացման շահերին համապատասխանող գներիմի քաղաքականություն, վորը, սակայն, համաձայնեցրված պիտի լինի նաև պետական արդյունաբերության հետ:

Ահա այն հիմնական ինդիրները, վոր կանգնած են Հայաստանի խորհրդային իշխանության առաջ յերկը ապրանքացըջանառության կանոնավորման բնագավառում:

Թույլ տվեք, ընկերներ, այժմ անցնել մեր անտեսության մյուս խոշոր ճյուղին՝ մեր արդյունաբերությանը:

Ինչպես յես ասացի, այդ արդյունաբերությունը ներկայումս շատ աննշան դեր է խաղում: Նա մեզ մոտ թույլ եր զարգացած նաև պատերազմից առաջ, մասնակնդ վոր նա այն ժամանակ կրում եր համարյա բացառապես տնայնագործականարհեստային բնույթ: Իսկ իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների ժամանակ՝ նա իսպառ ավերվեց և համարյա վոչնչացավ: Հայաստանի խորհրդայնացումից հետո արդյունաբերությունն սկսեց վերակենդանանալ և նոր ուղիղ ու ելեւերի վրա կանգնել: Մեր արդյունաբերության գլխավոր կենտրոն կաթնատնտեսական կազմակերպությունը:

ների ձեռք (Ժողովնախորհ, Հայքամբակ և այլն): Արդյունաբերության այդ մասն ունի կազմակերպված և տեխնիկապես սարքավորված բնույթ, իսկ մասնավոր արդյունաբերությունը շարունակում է կը ել բացառապես տնայնագործական-արհետային բնույթ:

Համաձան 1923 թվի մայիս ամսի ցուցակագրման, Հայաստանի քաղաքներում, գլուղաքաղաքներում և գործարանային ավաններում կային.

Զենքարկությունների թիվը	Արդյունաբերական ձեռնարկություններում գործող թիվը	Մերժնայական շարժիչների գործությունը հաշվառում	Ըստանությունը վրակի ուղարկությունը
Բացառական առաջանակ	0/0 նվազագույն	Բացառական առաջանակ	0/0 նվազագույն
Գետական և կոռպերատիվ .	155	11,0	1580
Մասնավոր . .	1221	89,0	1991
Ամբողջը . . .	1376	100	3571
			44,0
			4229
			91,5
			164,400
			71,5
			28,5
			100
			4621
			100
			229,870
			100

Աղյուսակից յերկում ե, վոր ընդհանուր քանակից ազգայնացրած արդյունաբերությանը բաժին ե ընկնում աշխատող ուժի $44^0/0$ -ը, ընդհանուր արդյունքների $71,5^0/0$ -ը և մեքենայական շարժիչների ուժի $91,5^0/0$ -ը: Թվածու տարրերը հանդիսանում են արդյունաբերության գլխավոր ֆակտորները:

1923/24 բյուջեային տարում մեր գլխավոր արդյունաբերական ձեռնարկություններից 19-ի մեջ, վոր մեր յերկրի տնտեսական կյանքում կարևոր դեր են խաղում և հանդիսանում մեր արդյունաբերության գլխավոր կենտրոնները, մենք ունենք միջին թվով տարեկան 775 բանվոր, այդ ձեռնարկությունների ընդհանուր արդյունքների արժեքը $3,583,696$ չերվոն ուղարկու յե հավասար: Այդ գումարի խոշոր բաժինն ընկնում է բամբակագտիչ արդյունաբերությանը, վոր հավասար ե

1,305,666 ուղարկու կամ ընդհանուր արդյունքների արժեքի $36,4^0/0$ -ին: Երկրորդ տեղը բռնում է գինու, սպիրտի և կոնյակի արտադրությունը ($815,049$ ուղարկի կամ ընդհանուր արդյունքների $22,7^0/0$ -ը): 1924/25 թվին 26 արդյունաբերական ձեռնարկություններում բանվորների թիվը հասնում է մինչև 1772 մարդու (800 մարդուց ավելին զբաղված եր միայն պղնձի արդյունաբերության մեջ, իսկ ընդհանուր արդյունքների արժեքը հավասարվում է $8,752,062$ ուղարկու: Արդյունաբերության առանձին ճյուղերի վերաբերյալ այդ գումարը տոկոսային հարաբերությամբ բաժանվում է հետևյալ ձևով: — Բամբակագտիչ արտադրություն $44,0^0/0$ Գինու, սպիրտի և կոնյակի արտադրություն $22,5^0/0$ Պղնձի արդյունաբերություն $8,8^0/0$ Կաշու արտադրություն $5,2^0/0$ Պոլիգրաֆիական $5,1^0/0$ Մյուսները $14,4^0/0$

Պետությունը մտահոգված է մեր արդյունաբերության ընդարձակմամբ: Կառուցվում են մի շարք խոշոր արդյունաբերական գործարաններ, ինչպես Յերևանի և Լենինականի հիգրո-ելեկտրոլիայանները, տեքստիլ գործարանը, ձիթահանուղունի գործարանը, մի ամբողջ շարք պանրագործարաններ և այլն: Այս գործարանները մեր յերկրի տնտեսական կյանքի վերականգնման գործում մեծ դեր են խաղալու:

Այսպիսով, չնայած վոր մասնավոր ձեռնարկություններն ենց թվով գերիշխող են հանդիսանում պետարդյունաբերության հանդեպ, սակայն պետական արդյունաբերության գերիշխումը մասնավորի վրա՝ վոչ մի կասկածի տեղիք չի տալիս:

Մեր պետական արդյունաբերության գլխավոր ձևուղը ներկայումս հանդիսանում է բամբակի արդյունաբերությունը, ապա պղնձահալ արդյունաբերությունը (Ալահվերդի, Ղաթթար), արդյունաբերությունը (Արարատ), կաշվերենի արդյունաբերությունը և մի շարք ուրիշ ձեռնարկություններ և կունաբերությունը և մի շարք ուրիշ ձեռնարկությունների և դեռ պիտի շինվեն: Մենք գործարանները, վոր շինվում են և դեռ պիտի շինվեն: Վենք պանականգնում ենք նախապատրաստությունների և վերականգնում

Ների շրջանում։ Որինակ՝ մեր պղնձահալ արդյունաբերության բնագավառում ծրագրված ե գործի գցել այն գործարանները, վորոնք կամ դադարած ելին, կամ հարմարեցրած կողմանակի մթերքներ արտադրելու։ 1924—1925 թվին մենք նրանց գրինք արտադրողականության կատարյալ վերականգնուման պայմանների մեջ, և նրանք արդեն կարող ելին վերադառնալ իրենց հիմնական արտադրությանը՝ պղինձ հալելուն։ Ալլահվերդու գործարանում, տեղադրել արդեն ձեռնամուխ ենք յեղել շահագործական աշխատանքներին (Շամբուլաղյան հանքավայրեր)։ Մեր 1925/26 թվի արտադրական ծրագիրն ե՝ 19,000 փութ կարբիտ, 46,000 փութ կարմիր պղինձ։ Յեռամյա ծրագրի համաձայն, վերականգնման և սարքավորման համար բաց ե թողնվում 13 միլիոն ռուբլի։ Ղաթարի գործարաններն ու հանքերն ունեն խոշոր նշանակություն ամբողջ Խ.Ս.Հ.Մ. արդյունաբերության համար։ 1924—1925 թվի արտադրական ծրագիրն եր՝ 200,000 փ. հանքանյութի արդյունահանություն, 40,000 փութ հալած պղինձ։ արդյունահանված ե 88,000 փութ հանքանյութ, հալված ե 30,000 փութ կարմիր պղինձ։ 1925/26 թվի արտադրական ծրագիրն ե՝ 1,050,000 փութ հանքանյութ, 150,000 փ. կարմիր պղինձ, ալյուրին մեկուկես անդամ ավելի նախապատերազմյան պղնձի մշակությունից (90,000 փութ)։

Մեր բամբակի արդյունաբերությունը, վորը նոր նոր և առաջ գալիս իբրև խական արդյունաբերություն և փոչ անայնագործություն, ներկայումս բավականին մեծ դեր ե խաղում մեր բամբակի մշակման գործում իր յերեք գործարաններով, վորոնք արտադրում են ամսական 196,5 հազար փութ։

Պատերազմից առաջ Հայաստանում նախնական-տնտեսագործական բամբակագոտիչ գործարաններ կային համարյա ամեն մի խոշոր գյուղում։ Այդ գործարանների ընդհանուր թիվը Յերևանի նահանգում հավասարվում եր 355-ի, վորոնցից 193-ն աշխատում ելին ջրով և ձիով, և միայն 162-ն եր մեքենայական։ Յուրաքանչյուր գործարանի արտադրողականությունն ամբողջ սեղոնի ընթացքում միջին թվով 6—7 հազար փութ եր։

Ներկայումս, բամբակագոտիչ արդյունաբերությունն ամբողջովին ծանրանում ե յերեք նոր սարքավորված գործարանների վրա, վորոնք ունեն 16 ջին, 1220 սուց, 290 ուժ ներկայացնող շարժիչներ, և վորոնց արտադրողականությունն ե ամսական 196,5 հազար փութ։

Բամբակի արդյունաբերության վերաբերյալ մեր բոնածուղությունն ընդառաջ ե գնում այն բաղաքականությանը, վորը տանում ե Միությունը, այսինքն՝ մոտեցնել գյուղատնտեսական հում նյութերի վերամշակումն այդ հում նյութերի աղբյուրներին։ Մենք գտնում ենք, վոր մեր բամբակի արդյունաբերությունն ունի այդ հնարավորությունը։

Մենք այստեղ ծրագրում ենք վոչ միայն բամբակի զբանական գործն ամբողջովին մեր ձեռքն առնել, այլև մտածում ենք վորոշ չափով տեքստիլ արդյունաբերություն հիմնել։ Այս տարի մեզ մոտ ավարտվում ե տեքստիլ գործարանի կառուցումը, վորն ունենալու յե 20,000 իլիկ։ Կառուցման ժամանակատիվ նկատի յե առնված նրա հետագա ընդարձակումը։ Պետք է միաժամանակ վերականգնվի նաև կտավի արտադրությունը։ Մեր ծրագրում կա նաև գունավոր չթի գործարանի կառուցումը։ Կողմանակի մթերքների արտադրությունը, ինչպես յուղագործությունն ու ոճառագործությունը, մենք մտածում ենք գործությունն ու ոճառագործությունը, մենք մտածում ենք պատեղ հասցնել այսպիսի չափերի, վոր մեր արդյունաբերության լուրջ ձյուղերից մեկը գտնուա այն։

Ինչ վերաբերում ե գինու և կոնյակի արտադրությանը, մենք կանգնած ե ասել, վոր այդ գործը մեզ մոտ դրված ե ամուր հիմքետք և ասել, վոր այդ գործը մեզ մոտ դրված ե այն քերի վրա, և մենք կարծում ենք, վոր չենք դուրս գա այն քերի վրա, և ասել, վորով գնում ե Արարատ խոշոր արտադրության ոելսերից, վորով գնում ե Արարատ գործարանը։

Ըսկերներ, արդյունաբերության ընդարձակառում ներկայումս մեր առաջ կանգնած ե մի շատ խոշոր խնդիր, վոր կոչված ե մեր առաջ կանգնած ե մի շատ խոշոր խնդիր, վոր կոչված ե հազեցնելու ներկայումս սուր կերպով զգացվող մեր կուլտուրական ծարավը։

Մեր կուլտուրական զարգացման ընթացքում մենք հենք հետամնաց պոլիգրաֆիական տեխնիկայի վրա։ Այն վում ենք հետամնաց պոլիգրաֆիական տեխնիկայի վրա։

ամենը, ինչ մենք կարող եյինք անել այստեղ, պետք ե պահանջեր մեզնից կանոնավոր, տեխնիկայի վերջին խոսքին համապատասխան լավ կազմակերպված մեծ տպարան։ Մենք կարծում ենք, վոր այդ խնդիրը մենք պետք ե կարողանանք իրագործել առանց վորևե կողմանկի աջակցության, միայն Հայաստանի ուժերով։

Դրան հարակից նկատի ունենալով նորահաս յերիտասարդ բանվորների խոշոր կադրի հանդես գալը, մենք կարծում ենք, վոր մեր ամբողջ արդյունաբերության և ամբողջ մեր տնտեսության հետագա զարգացման համար մեզ անհրաժեշտ ե առաջին հերթին ունենալ մի խոշոր մեխանիկական գործարան։ Նրա ծրագիրն արդեն կազմված ե, գաղգրահներն ստացված են, և այս տարի մենք մտածում ենք կառուցել նոր շենք ու ձեռնամուխ լինել աշխատանքներին։

Բայց այդ ամբողջ գործի ընթացքում մենք բոլորովին ասպասելի կերպով հանդիպում ենք մի շարք խոչընդուների և զգում ենք վորակյալ բանվոր ուժերի պակասը։ Յերեկ վիճարանությունների ժամանակ ընկեր Հովսեփյանը հանդես յեկավ և մատնանշեց այն գործազրկությունը, վորը նկատելի յե վոչ վորակյալ աշխատավոր ուժերի մեջ։ Յես չեմ ուզում վոչինչ ավելացնել նրա այդ բնութագրությանը։ Դրանք մեծ մասամբ վոչ վորակյալ բանվորներ են, դրանք նույնիսկ բանվորներ ել չեն, այլ գրասենեկային աշխատավորներ։ բայց կան նրանց մեջ նաև սեաշխատ բանվորներ և այնու իսկ վորակյալ բանվորների մեջ գործազրկություն ամենաին չկա։ Իրենց վորակյալ բանվոր անվանող գործազրկությունների վորակումը մեծ կասկածի տակ ե, քանի վոր նրանց վորակյալ լինելը վոչ մի հիմնարկության մեջ ստուգման չի լինթարկված։ Գալիս ե մի բանվոր և հայտնում ե, վոր ինքը մօնայոր ե, բայց բանից դուրս ե գալիս, վոր նա բոլորովին ել մօնայոր չե և այդ գործում վոչինչ ել չի հասկանում։ Յեթե մենք ցանկանում ենք անցկացնել արդյունաբերական ոջախներ հաստատելու մեր այն գիծը, վորի մասին յես խոսեցի, ապա պետք ե լուրջ մտածել վորակյալ ուժեր ձեռք բերելու մասին և նկատի ունենալով

այդպիսի բանվոր ուժերի պակասը, պետք ե վորոշակի կերպով մեր կուլտուր-կրթական բաղաքականությանը տալ պրոֆետելիք մեր կանոնական թեքում։ Յես արդեն ասացի, թե ինչպես են տեխնիկական թեքում։ Յես արդեն ասացի, թե ինչպես են աշխատող բանվոր ուժերը, վորոնց մեծ մասը կազմակերպված է արհեստական միությունների մեջ, բաշխվում կերպված է արհեստական միությունների մեջ, բաշխվում կերպված է արհեստական միությունների մեջ։ Ամբողջացման համար բերում եմ զբաղված բանվոր ուժերի բաշխման հետևյալ աղյուսակն ըստ ձեռնարկությունների և հիմնարկությունների, ըստ աշխատանքի կատեգորիաների և ըստ արհմիութենական խմբերի բանվորական ուժերի թվի։

I. Արդյունաբերական խումբ	Համարական վարչություններ	Վ. Ո. Ռ Ո Ւ Յ թ վ ո ւ մ		
		Բան- վորներ	Ծառա- յողներ	Ստորին ծա- ռայողներ
1. Հանքագործ բանվոր.	1491	1275	128	88
2. Կաշեգործներ	413	360	40	13
3. Մետաղագործներ	247	217	21	9
4. Տպագրիչներ	327	272	28	17
5. Սննդագործներ	1354	1059	167	138
6. Կառուցողներ	3336	3066	233	37
7. Մանածագործներ	677	453	177	47
8. Կարողներ	200	192	8	0
Ընդամենը	8055	6904	802	349
II Խումբ Փոխադրություն և կապ	4194	3007	1187	
III Խումբ Հողանտառ	1678	693	985	
IV Խումբ Կոմմունալ-տնտեսութ.	962	606	456	
V Խումբ Հիմնարկությունների և գործատների բանվ.	10,032	515	9617	
Ընդամենն ամբողջ Հայ- աստանում	24,921	11,625	12,957	349

Այստեղ նկատելի յե հիմնարկություններում ծառայողների թվի գերազանցումն արտադրական բանվորների թվից։ Այստեղ յերկու խմբերի աճումն ել փորոշակի կերպով զուգահեռաբար և ընթանում, ըստ վորում, հիմնարկություններում ծառայողների թվի գերազանցումը մնում է համարյա նույնը։ Ահա մեր զբաղված բանվորական ուժի բնութագիրը, վորը յես կարողացա տալ մեր տրամադրության տակ գտնված նյութերի հիման վրա։

Թույլ տվեք այժմ անցնել իմ գեկուցման վերջին մասին, մեր կուլտուրական ֆրոնտին։ Այստեղ մեր առաջ կանգնած ե այն խոշոր խնդիրը, վորը տրված ե Ընկեր Լենինի կողմից։ Այդ խնդիրը փորոշ կուլտուրական հեղափոխությունն ե. բայց մենք այդ կուլտուրական հեղափոխությունը չենք կարող անցկացնել, յեթե չստեղծենք վորոշ ոջախներ, վորտեղ կկարողանայինք հավաքել այդ կուլտուրայի փորձերը, և յերկրորդ, յեթե մենք կուլտուրան անցկացնելու համար չենք ստեղծի գյուղական ստորին շերտերի և աշխատավորության համար բավականաչափ ընդարձակ մի ցանց։

Այդ տեսակետից, ընկերներ, թույլ տվեք կանգ առնել առենից առաջ այն հիմնարկությունների ցանցի վրա, վորտեղ կենտրոնանում ե մեր նյութական և հոգեկան կուլտուրան և ստեղծվում բազա ազգային կուլտուրայի համար։ Այդ հանրային գրադարանը, գրապալատը և գիտական ինստիտուտն են, հիմնարկներ, վորոնց ծանոթ չեյին դաշնակները, վոր հպատականում են և հպատականում եյին իրենց կուլտուրական աշխատանքով, ազգային կուլտուրական արտում կատարած իրենց մեծ աշխատանքով։ Այս մեկ, մյուս կողմից, մեր բանվորագյուղացիական մասսաներն անցնում են մեր կուլտուրկրթական ապագարատաներով։ Արտադրոցական կրթության առարիգում մենք չենք կարողացել հայտնաբերել բավարար չափով գործունեյություն, բայց, համենայն գեպս, այստեղ մենք ունենք վորոշ նվաճում։ Իսկ սոցիալական դաստիարակության բնագավառում, հասունացող սերնդին գեպի խորհրդային սոցիալական դաստիարակության հիմնարկները գրավելու ասպարի-

զում՝ շատ բան ե արված։ Մեր աշխատանքային դպրոցներն այդ տեսակետից անում են իրենց առաջին անհամարձակ քայլերը։ Մեզ մոտ տեղի յե ունենում ուսուցչության վերապատրաստումը։

Քանակի տեսակետից մեր աճումը հետեւյալ պատկերն ե ներկայացնում։ 1914 թվի համեմատությամբ, մեր դպրոցական ցանցի ընդարձակումը հավասար եր 173,76% ի։ Այդ տեսակետից մեր առաջնությունը դաշնակների համեմատությամբ ակներկ ե, քանի վոր նրանք այդ բնագավառում խելոք են գտնվել ցարիզմից ել յետ գնալ։

1913—1914 թվին 67 քառակուսի կիլոմետրին ընկնում եր մի դպրոց, իսկ մեր որով, 1924 թվին, 40 քառակուսի կիլոմետրին ե ընկնում մի դպրոց, այսինքն՝ դպրոցական ցանցն ավելի քան մեկ ու կես անգամ ընդարձակվել ե։ Ցարական կառավարության ժամանակ մեկ գյուղական դպրոցն ընկնում եր 67 քառակուսի կիլոմետրին, դաշնակների ժամանակ՝ 87,44 քառակուսի կիլոմետրին, իսկ այժմ՝ 44,6 քառակուսի կիլոմետրին կիլոմետրին, իսկ այդի 1924—1925 թվին՝ 30 հոգի, 1920 թվին՝ 41 հոգի, իսկ 1924—1925 թվին՝ 88 հոգի։ Մի ուսուցիչն ընկնում եր, 33 աշակերտի՝ ցարական կառավարության ժամանակ՝ 33 աշակերտի՝ 1919/20 թվին և 36,89 աշակերտի մեր ժամանակ։ Այսպիսով ուսուցիչների ծանրաբուժում ներկայումս մեզ մոտ ավելի յե, քան ցարական գործություն և դաշնակների ժամանակ։ Մի դպրոցի շակառավարության և դաշնակների ժամանակ՝ Մի դպրոցի շակառավարության կառավարության ժամանակ հավասար եր 4,94-ի, դաշնակների ժամանակ՝ 5,57-ի և հիմա՝ 3,76-ի։

Կուլտուր-կրթական աշխատանքների հարցում, հակայական նշանակություն ունի ազգային փոքրամասնություններին այդ կուլտուրական աշխատանքների մեջ գրավելու մեր քաղաքականությունը։

Այստեղ այն շրջանն ե, վորտեղ գյուղական ստորին շերտերը հատկապես ավելի շահագրգություն են ցույց տալիս, վորտեղ վորոշակի գոյություն ունի նախանձախնդրություն, Մենք այդ գիտեյինք։ Մենք այդ շատ լավ նախատեսել եյինք,

և հենց սկզբից ևեթ վարել ենք այնպիսի քաղաքականություն, վոր վոչ մի տեղիք չտանք զանազան տարածայնությունների և դատապարտությունների և հատկապես նախանձուտության: Մենք գտնում ենք, վոր մեր կուսադողկոմատի բոնած քաղաքականության գիծը յեղել ե կատարելապես ուղիղ և միանգամայն գոհացուցիչ: Թույլ տվեր հայտարարել 1925 թվի սկզբի և վերջի թվերը. դրանք ազգային փոքրամասնությունների դպրոցական ցանցի հետեւյալ պատկերն են տալիս.

1925 թվի սկզբում. 1925 թվի վերջում.

Թուրքական դպրոցներ	65	2735	խմբով	91	3693	խմբով
Ռուսական	»	25	1529	»	25	1793
Յեղիպական	»	4	150	»	10	305
Հունական	»	4	227	»	4	344
Ասորական	»	4	193	»	5	263
Կիկայաներ		49				

Ինքներդ յեղրակացրեք: Հիմա բերում եմ թվերի յերեք շարք: Առաջին շարքը ցույց է տալիս մեր Հանրապետության մեջ ապրող ազգությունների տոկոսային հարաբերությունը. յերկրորդ շարքը՝ զանազան ազգությունների սովորողների տոկոսային հարաբերությունն ամբողջ Հանրապետության սովորողների ընդհանուր թվի համեմատությամբ և վերջապես յերրորդ շարքն ասում ե, թե յուրաքանչյուր ազգության մեջ քանի հոգու մի դպրոց ե ընկնում.

Ազգությունների հարաբերությունը	89,98	9,8	2,45	1,02	0,33	0,28	100
Սովորողների տոկոսային հարաբերությունը	91,56	4,82	2,47	0,4	0,41	0,28	100
Քանի մարդուն ընկնում և մի դպրոց	1279	967	908	842	749	527	1217

Այստեղ պետք ե ընդգծել, վոր թուրքական լեզվով սովորողների տոկոսային հարաբերությունը շատ բանով յետ

մնում բնակչության ընդհանուր թվի տոկոսային հարաբերությունից: Թուրքական դպրոցների զարգացման տեսակետից՝ դամի խոշոր բաց և թուրք բնակչության համար, վոր իր գրադիտությամբ հայերից և ուսումներից ավելի հետաժնաց ե: Թուրքական դպրոցներ բաց անելու հնարավորությունից զըրկված ենք, վորովհետև չունենք թուրքական լեզուն ավանդող ված ենք, վորովհետև այդ լեզուն մոտ հատկապես զգալի թուրք դասատուներ. այդ բացը մեզ մոտ հատկապես զգալի յե: Չնայած այն հանգամանքին, վոր մենք շատ անգամ ենք դիմել Ադրբեջանին թե կուսադողկոմատի և թե այլ գծերով, վորպեսզի բավարար չափով մեզ ուսուցիչներ մատակարարեն, թայց մինչև այժմ ել ուսուցիչներ մենք չենք ստացել: Այստեղ նույնպես ուսուցիչների պակասն զգալի յե, ընկերներ. այդ պատճառով թուրքական մի շարք գյուղերում դասավանդում են թուրքական լեզուն իմացող հայերը: Բայց յեթե վերցնենք միուս թվաշարքը՝ քանի մարդուն և ընկնում մի դպրոց, ապա այստեղ մենք կստանանք բոլորովին տարբեր փոխհարաբերություն: Մի դպրոց ե ընկնում 1279 հայի, 967 թուրքի, 908 ոուսի, 842 յեղու, 749 քրդի և 527 ասորու, միջին թվով 1217 մարդու. ստացվում ե բնակչության թվի համեմատությամբ կանոնավորապես պակասող մի թվաշարք:

Մեր կուլտուրական աշխատանքներին շատ մոտ ե կանգնած Արդժողկոմատը, հատկապես վերջին տարում, յերբ նա իր գործունեյության կենտրոնական կետը դարձրեց հեղափոխական որինականության անցկացնելլը: Դեպի այդ բնագավառն եղավկում աշխատավորական լայն մասսան և այնտեղ դաստիարակվում ե գիտակցական վերաբերմունք դեպի խորհրդակին որենքները: Այստեղ յես պետք ե առանձին հպարտությամբ հայտարարեմ, վոր մեր դատարաններն ազնիվ դատարաններ են: Չնայած բոլոր փորձերին, այս բնագավառում գտնել մի այնպիսի բան, վոր կարողանար ստվեր ձգել մեր դատարանների ազնվության վրա, վորևե բան գտնել չի հաջող վել: Յերբ մեր պատասխանատու աշխատավորները գյուղերը քննության են գնում, գյուղացիները կաշառակերության, կողմ-

նապահության վրա և այլն, չեն գանգատվում: Կարող ե պատահել, վոր այդպիսի դեպքեր տեղի յեն ունենում, իբրև բացառիկ յերեսություններ, բայց գանգատներ չկան: Մեր դատարանների վիճակը կախված ե տեղական բյուջեներից: Ինչ չափով ների պահանջման մեջ կախված ե տեղական բյուջեները դեպքական բյուջեներին, և ինչ չափով տեղական բյուջեները դեպքից տարածության մեջ շարք տարիների ընթացքում այդպես ել լինելու էն, մենք անկարող պիտի լինենք բավարար չափով ընդարձակել ժողովրդական դատարանների ցանցը:

Արդարադատության բնագավառում հատկապես աչքի գտնող հանգամանքներ են մեր գավառական շրջիկ նստաշրջանների և ցուցադրական պրոցեսաների փորձերը, վոր արդեն հաճախ կիրառվում են: Գլխավոր դատարանու, այս վերջին տարվա ընթացքում, իր գործերի $60^{\circ}/\circ$ -ը ընմել ե այդ նստաշրջաններում, իսկ ժողովատարանը՝ $20^{\circ}/\circ$ -ը: Իսկապես վոր աշխատանքի այդ մեթոդը պետք ե ուղղվը համարել: Դատախազության վրա պարտավորություն ե դրվում յուրաքանչյուր ամիս $10-15$ որ պարբերաբար շրջագայություններ կատարել գավառական կենտրոնական գյուղերը՝ ծանոթանալու շրջգործկոմների և գյուղականության տեսակետից, տեղերում գանգատներ ընդունել, զրույցներ կազմակերպել, խորհրդային իրավունքի և որենքների մասին դասախոսություններ կազմակերպել և այլն:

Յես կսահմանափակվեմ մեր կուլտուրական աշխատանքների այս կողմի մասին հաղորդած տեղեկություններով, վոր պեսզի անցնեմ կուլտուրական աշխատանքների վերջին բաժնին, առողջապահությանը:

Յեթե չայաստանում վորեե բան գյուղացիության աչքին ընկնում ե, ապա այդ առողջապահության ասպարիզում գյուղացիությանը հասցրած մեր այժմյան ոգնությունն ե: Յերբեք, վոչ մի կառավարության որով, նախկին Յերևանի նահանգի տերրիտորիայի վրա չի լիղել բժշկական և պրոֆիլակտիկական (նախազգուշական) հիմնարկությունների այնպիսի մի ցանց, ինչպիսին գոյություն ունի այժմ: Յերբեք, վոչ մի ժամանակ՝ սոցիալական այնպիսի չարիքներ, ինչպես մալարիան, վեներա-

կան հիվանդություններն ու թոքախտը, չեն ունեցել պայքարի այնպիսի ընդարձակ միջոցներ, ինչպիս այժմ, և վոչ միայն պայքարի, այլև լուրջ ու մանրակրկիտ ուսումնասիրության: Յերբեք չայաստանի բաղաքացիներն ու գյուղացիներն իրենց տերրիտորիայի վրա չեին կարող ստանալ այն չափով վորակյալ բժշկական ոգնություն, ինչ չափով ստանում են այժմ: Բայց և այնպիս, մենք գեռ հեռու յենք, շատ հեռու այն դրությունից, ինը հսարավորություն կունենանք գյուղացիությանը տալ այն բոլորը, ինչ անհրաժեշտ ե, և ինչ նա իրավամբ պահանջում ե իր հարազատ կառավարությունից: Այս ասպարիզում Առժողովում համար գեռ շշոշափված շատ անկյուններ կան, վոր պահանջում են մի շարք տարիների համառ աշխատանք: Այս տեսակետից չայաստանի չամալսարանի բժշկական ֆակուլտետը հանդիսանում ե մեր խոշորագույն նվաճումը:

Յեթե դուք յերկար եք կանգ առնելու լինիսականում, ապա յես կիսնդրեյի ձեզ դիտել այդ՝ համեմատաբար վոչ շատ խոշոր գավառական կենտրոնի բժշկական հիմնարկությունները, հատկապես նրա կնաբուժական (հինեկոլոգիчесկոյ) հիվանդանոցը, վորը կարող եր դառնալ մեր անդրկովկասյան վորեե չանրապետության համալսարանի կնաբուժական կլինիկան:


Հատուկ ուշադրություն պիտի դարձնել մեր կուրորտավին շինարարության վրա: Պետք ե ասել, վոր թեև չայաստանի կուրորտային հնարավորությունները տեղի յեն տալիս վրաստանի կուրորտային հնարավորություններին, բայց և այնպես նրանք այնպիսի արժեքավոր մեծություն են ներկայացնում, վոր անհրաժեշտ ե այդ հարցերով շատ լուրջ կերպով զբաղվել: Մեր կողմից չուսումնասիրված կուրորտային հնարավորությունների, և հատկապես մեր հանքային հարստությունների ու բուժիչ աղբյուրների մասին յես պետք ե ասես, վոր նախնական ուսումնասիրության արդյունքները մեր առաջ բաց են անում շատ լայն հեռանկարներ. շատ տեսակետներից չայաստանը կարող ե դառնալ մեր Անդրկովկասի համար կուրորտային ամենակարևոր շրջաններից մեկը, գուցե նաև մեր ամբողջ Միության համար, քանի վոր ժամանակի ընթացքում

մեր աշխատավորության հոսանքը դեպի այդ կուրորտային
տեղերը պետք է ուժեղանա, և քանի վոր խորհրդային իշխա-
նության հոգատարության կենտրոնը կազմելու յեն վոչ թե
վերին շերտերը, այլ բնակչության աշխատավորական լայն
մասսաները: Կուրորտային պահանջներն ամբողջ Միության
մեջ տարեցտարի մեծանում են, վոլովինեաւ աշխատավորա-
կան լայն մասսաների հոսանքը գնալով տվելի յե ուժեղանում.
և հենց այդ տեսակետից ե, վոր պետք է ոգտագործել մեզ
մոտ յեղած բոլոր հնարավորությունները:

Մենք կարծում ենք, վոր այդ ուղղությամբ մենք կանենք
այն ամենը, ինչ մեզնից կախված ե, և վստահ ենք, վոր մեզ
ամենալայն աջակցություն ցուց կտրվի խորհրդային բարձր
որգանների կողմից:

Ըստ աշխատեցի ձեր առաջ պարզել մեր տըն-
տեսական, կուլտուրական և քաղաքական նվաճումների պատ-
կերը: Յես աշխատեցի այդ անել վոչ պաշտոնական լավատե-
սությամբ, վորը յերբեք չպիտի լինի և վայել ել չե մեզ ներ-
կա պարագաներում: Իմ ցանկությունն եր ձեր առաջ պարզել
վոչ միայն մեր նվաճումների պատկերը, այլև ձեր ուշադրու-
թյունը հրավիրել մեր բոլոր դեֆեկտների և մեր աշխատանքի
պակասավոր կողմերի վրա:

Յստ յենթաղրում եմ, վոր մեր տնտեսության վերականգ-
նըման թափն ուժեղացնելը, գյուղական տնտեսության արտա-
դրողական ուժերի բարձրացման և աճեցման հիմնական գիծը,
չայաստանում արդյունաբերական ոջախներ զարդացնելու նոր
կուրսը, պետական-կոոպերատիվ որգանների կողմից գյուղա-
կան հուց նյութերի ընդգրկման և մթերման կուրսը, մեր
յերկրի վոռոգման սիստեմի և ելեկտրիֆիկացիայի կուրսը,
գյուղական տնտեսության ինտենսիֆիկացիայի, կոոպերացման
և ինդուստրիալիզացիայի կուրսը, վորակյալ բանվորական ու-
ժեր պատրաստելու կուրսը, կուլտուրական հեղափոխության
կուրսը, — ահա հենց սրանք են այն բոլորը, ինչ անհրաժեշտ ե
անել խորհրդային յերկրում: Թե ինչ ուղղությամբ պիտի ըն-
թանա մեր հետագա գործունեցությունը, դա կախված կլինի
այն գնահատականից, վորը դուք պարբեր աշխատանքին:



մեր
տես
նու
զե



ԳԻՆԸ 30 Կ.



NL0217766

40.309